

Տանուլտ Թրամի Ընտրուեցաւ Ամերիկայի 47-րդ Նախագահ



Միացեալ Նահանգներու
Նորընտիր Նախագահ
Տանուլտ Թրամի

Նոյեմբեր 5-ին, Ամերիկայի Միացեալ Նահանգներու տա-րածքին տեղի ունեցած ընտրութիւններուն, նախկին նախագահ Տանուլտ Թրամի ընտրուեցաւ երկրի 47-րդ նախագահ, պարտութեան մատնելով փոխ-նախագահ Քամալա Յարրիսին:

Ինչպէս որ հանրային կարծիքի հարցախոյզերը կը նախատեսէին, տատանուող նահանգներու մէջ, որոնց շարքին Փենսիլվեանի, Միչիկիոնը, ճորճիան, Ուիսքոնսինը եւ շարք մը այլ նահանգներ թերութեան դէպի հանրապետականներու կողմը եւ այդպիսով Թրամի հասաւ յաջողութեան:

Հանրապետականները Սպիտակ Տան կողքին կարողացան ձեռք ձգել նաեւ Ծերակոյտի աթոռներուն մեծամասնութիւնը:

Ինչ կը վերաբերի Ներկայացուցիչներու Տան հոն վերջնական արդիւնքները յայտնի կը դառնան յառաջիկայ օրերուն:

Ամերիկայի ամենէն բազմամարդ նահանգը հանդիսացող Քալիֆորնիոյ մէջ Քամալա Յարրիս առաջ էր մեծ տարբերութեամբ, սակայն այդ արդիւնքը բաւարար չէր յաջողութիւն ապահովելու Ամերիկայի ամբողջ տարածքին:

Միւս կողմէ, Ատամ Շիֆֆ ընտրուեցաւ Ծերակոյտի անդամ, ներկայացնելու համար Քալիֆորնիան:

Գերիները Չվերադարձնելու Պարագային COP29-ին Երթալը Ճիշդ Չէ. Ալէն Սիմոնեան

Գերիները չվերադարձնելու պարագային Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան COP29-ին մասնակցութիւնը ճիշդ չի համարեր:

«Ես չեմ կարծում, որ նման քննարկման պարագայում, երբ կայ հնարաւորութիւն գերի վերադարձնելու, մենք պէտք է յապաղենք եւ չգնանք նման քայլի, բայց կ'ապրենք, կը տեսնենք», - խորհրդարանին մէջ լրագրողներուն ըսաւ ան՝ ի պատասխան հարցումին, թէ գերիներու վերադարձը պիտի նպաստէ՞, որ Հայաստան ընդունի COP29-ի հրաւերը:

Իսկ հարցումին, թէ գերիները չվերադարձնելու պարագային մասնակցութեան անհրաժեշտութիւն կը տեսնէ՞, Ազգային Ժողովի նախագահը պատասխանեց. «Չեմ կարծում ճիշդ է»:

COP29-ի գագաթաժողովին Երեւանի մասնակցութիւնը հաստատուած չէ, խորհրդարանին մէջ պիտո՞ւնք քննարկման շրջանակին մէջ օրերս յայտնեց Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան:

COP29 գագաթաժողովը Նո-



ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան

յեմբեր 11-22-ին պիտի կայանայ Պաքուին մէջ, որուն Ատրպէյճանը հրաւիրած է նաեւ Հայաստանը:

Մամուլը կը գրէ, որ արտաքին գործերու նախարարը հնարաւոր է Պաքու մեկնի պայմանով, որ Ատրպէյճանը Հայաստանին գերիներ վերադարձնէ:

Ըստ պաշտօնական տուեալնե-

րու՝ Ատրպէյճանի մէջ հիմա 23 հայ գերութեան մէջ է, անոնցմէ ութ հոգին Արցախի ռազմաքաղաքական նախկին ղեկավարութիւնն է:

Պաքու Արցախի նախկին պաշտօնեաներուն ծանր մեղադրանքներ առաջադրած է՝ ահաբեկչութեան մինչեւ ապօրինի զինուած խմբաւորումներու կազմաւորում:

Լաիտի Դատարանը Հայաստան Ընդդէմ Ատրպէյճանի Գործով Որոշումը Պիտի Հրապարակէ Նոյեմբեր 12-ին



Արդարադատութեան Միջազգային Դատարանը

Հայաստան ընդդէմ Ատրպէյճանի գործով՝ Ատրպէյճանի կողմէ ներկայացուած նախնական առարկու թիւններուն վերաբերեալ Արդարադատութեան Միջազգային Դատարանը պիտի հրապարակէ իր վճիռը 2024 թուականի Նոյեմբեր 12-ին:

Այս մասին կը յայտնեն Միջազգային իրաւական հարցերով ՀՀ ներկայացուցիչի գրասենեակէն՝ մանրամասնելով, որ հրապարակային նիստը տեղի պիտի ունենայ ժամը 15:00-ին (Երեւանի ժամանակով 18:00-ին) Լահէյի իրաւաբանական պալատին մէջ, որուն

ընթացքին Դատարանի նախագահ, դատաւոր Նաուաֆ Սալամ պիտի կարդայ Դատարանին վճիռը:

2021 թուականի Սեպտեմբեր 16-ին Հայաստան վարչութիւն նախաձեռնեց Ատրպէյճանի դէմ՝ կապուած «ցեղապաշտական վերացման մասին» միջազգային պայմանագրի ենթադրեալ խախտումներուն հետ:

2023 թուականի Ապրիլ 21-ին Ատրպէյճան ներկայացուց նախնական առարկու թիւններ՝

Շար.ը էջ 5

Երեւան Կը Հաստատէ Հայաստանի Դեսպանը Սպառնալիքներ Ստացած Է Ատրպէյճանի Դեսպանէն

Արտաքին գործերու փոխ-նախարար Պարոյր Յովհաննիսեան արձագանգելով լուրերուն, թէ ԵՄ-ի մէջ Հայաստանի դեսպան Տիգրան Բալայեանի նկատմամբ ԵՄ-ի մէջ Ատրպէյճանի դեսպանը սպառնալիքներ հնչեցուցած է, ըսաւ. «Մեզ հասած տեղեկութիւններով՝ ընդունելութեան ընթացքում վիրաւորանքներ ու սպառնալիքներ են հնչել, որի վերաբերեալ յայտնել ենք պեղծիքական կողմին յայտագրով, ինչպէս նաեւ Եւրամիութեանը: Եւ այդ հարցով հետաքննում է տեղի ունենում»:

Աւելի վաղ Politico-ն գրած էր, որ Հայաստանի դեսպան Տիգրան Բալայեան յայտնած է, որ սպառնալիքներ ստացած է Ատրպէյճանի դեսպան Վաքըֆ Սատիքովի կողմէ: Հայաստանի դեսպանութիւնը այս առնչութեամբ պաշտօնական բողոք չդրած է Պրիւքսէլի մէջ այլ դիւանագիտական առաքելութիւններուն:

Կը նշուի, որ միջազգայր տեղի ունեցած է Պրիւքսէլի Tangla հիւրանոցին մէջ ընդունելութեան ժամանակ, որ կազմակերպուած էր Թուրքիոյ դեսպանատան կողմէ՝ ի պատիւ երկրի ազգային տօնին:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Դիւանագիտութեան Մասին Ծանծաղ Դատողութիւններ Անողին Յիշեցում

3. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ատրպէյճանում պահուող գերիներին հարցը, թող տարօրինակ չհնչի, ընդդիմութեանը յուզում է այնքանով, որ քանով այդ հարցի շահարկումը կ'օգնի իշխանութեանը էթանագին, անհիմն մեղադրանքներ ներկայացնել եւ քարոզչական նպատակներով օգտագործել: Թէ՛ «մոռացութեան են մատնել գերիներին, աշխատանք չեն տանում նրանց վերադարձնելու ուղղութեամբ, քանի որ», ինչպէս ժամանակ առաջ ազդարարեց ՀՅԴ-ականներից մէկը՝ «նրանց վերադարձից սարսափում են» (խօսքը մասնաւորապէս ԼՂՀ ռազմաքաղաքական ղեկավարութեան վերադարձից «սարսափելու» մասին է):

Եւ սա այն դէպքում, երբ իշխանութիւնը, ինչպէս տարբեր պաշտօնեաներ են այս ընթացքում քանիցս յայտարարել, ամէնօրեայ աշխատանք է տանում գերիների վերադարձը մէկ օր շուտ իրականութիւն դարձնելու համար: Այս հաւաստիացումներին հաւատալն ու դրանք ի գիտութիւն ընդունելը, բնական է, ընդդիմութեանը ձեռք չեն տալիս, քանի որ եթէ ընդունեն, ապա կը գրկուեն ակտուալ թեմայով կրքոտ ելոյթներ ունենալուց՝ աչափսով ցոյց տալով հասարակութեանը, թէ միակ ուժը, որի «թոքն ու ջիգերը մըմուռն է» գերիների վրայ, եղել է եւ կայ ընդդիմութիւնը: «Հայաստան»

Խմբակցութեան պատգամաւոր իշխան Սաղաթելեանը, զօրօրինակ, ինքնավստահ յայտարարել է՝ «սուտ են ասում, որ գերիների հարցը իրենց օրակարգում է, երբ որ Հայաստանի Հանրապետութիւնը ներկայացնողը ՄԱԿ-ի գագաթնաժողովում ելոյթ է ունենում եւ որեւէ կերպ դրան չի անդրադառնում, դա մեզ համար նաեւ լրջօրէն փաստ է՝ պնդելու, որ էս մարդիկ չեն զբաղւում: Հիմա տակից ով, որտեղ ինչ ա բանակցում, ինչի համար եւ ինչ առեւտրի առարկայ կայ էդ արանքում՝ դա արդէն մեզ համար կարեւոր չէ»:

Փաստօրէն, իշխան Սաղաթելեանին թուում է, որ ՄԱԿ ամպիոնը միակ տեղն է, որտեղ ելոյթ ունենալիս պէտք է պարտադիր բարձրացնես գերիների հարցը, եթէ այդ ամպիոնից չես հնչեցնում հարցը, ուրեմն «վայոյ», «փակում ես» հարցն ու մոռանում: Դիւանագիտական աշխատանքի մասին նման ծանծաղ դատողութիւններ անող ՀՅԴ-ական պատգամաւորին ուզում ենք իշեցնել, որ նախորդ տարի Դեկտեմբերին 32 գերիները վերադարձան ոչ թէ այն պատճառով, որ ՀՀ պետական պաշտօնեաները որեւէ ամպիոնից բոցաշունչ ելոյթ էին ունեցել, այլ դիւանագիտական հաշուարկուած աշխատանքի արդիւնքում: Արձանագրենք՝ իշխան Սաղաթելեանի ու ընդդիմադիր իր գործընկերների «փէշակը» գերիների թեման շահար-

կելն ու ծեփծեփալն է, իսկ իշխանութեան առաքելութիւնը լուռումունջ գործ անելը՝ առանց էթանագին ճշդողոցների:

Քանի որ շաբաթներ յետոյ Ատրպէյճանում պէտք է տեղի ունենայ «COP29»-ը, ընդդիմութիւնը, ինչպէս եւ սպասուում էր, որոշել է առիթն օգտագործել ինքնադրսեւորութեամբ համար: ՀՅԴ-ն եւ դրա խորհրդարանական խմբակցութեան ներկայացուցիչները որոշել են առաջիկայ օրերին ակցիաներ իրականացնել Երեւանում, այդ թւում՝ ԱԳՆ-ի շէնքի առաջ (ակցիա կ'անեն նաեւ ՄԱԿ-ի գրասենեակի, ՀՀ-ում գործող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների դեսպանատների առաջ): Խորհրդարանական ընդդիմութիւնը մտադիր է նաեւ ԱԺ հրատապ նիստ հրաւիրել: «Հրատապ նիստի նպատակն է առաջարկել Ազգային ժողովին ընդունել յայտարարութիւն, որն ուղղուած կը լինի Հայաստանի կառավարիչներին, միջազգային հանրութեանը եւ Ատրպէյճանին՝ կապուած Պաքուում անօրինաբար պահուող հայ գերիներին ազատ արձակելու հարցի հետ: Խօսքը թէ 2020 թուականի ողբերգական պատերազմի ընթացքում, թէ դրանից յետոյ եւ թէ Արցախի հայաթափման ընթացքում գերեվարուած ռազմաքաղաքական առաջնորդների մասին է: Եւ իւրաքանչիւր հասցէատիրոջ համար այնտեղ նախատեսուած են կոչեր: Տեսնենք, թէ ինչ-

պէս ՔՊ-ն իրեն կը պահի հայ գերիների վերադարձի վերաբերեալ յայտարարութեան քննարկման եւ ընդունման համատեքստում», - յայտարարել է ՊՈԻ խմբակցութեան ղեկավար Հայկ Մամիջանեանը՝ յաւելելով, որ խօսքը ԱԺ յայտարարութեան նախագծի մասին է, այլ ոչ թէ երկու խմբակցութիւնների յայտարարութեան: «Առնուազն զարմանալի կը լինի, եթէ ՀՀ ԱԺ-ն չընդունի հայ գերիների վերադարձի վերաբերեալ յայտարարութիւնը», - նշել է ՀՀԿ-ական պատգամաւորը:

Վերջինիս յայտարարութեան մասնաւորապէս այն ձեւակերպումը՝ «Տեսնենք, թէ ինչպէս ՔՊ-ն իրեն կը պահի հայ գերիների վերադարձի վերաբերեալ յայտարարութեան քննարկմանը», վկայում է քիչ վերը արուած եզրակացութիւնը՝ գերիների հարցը ընդդիմութեան համար «Պարապ վախտի Խաղալիք» է, որը կարելի է շահարկել պատեհ առիթի դէպքում ու այդ ինքրի ուղղութեամբ իշխանութեան կատարած աշխատանքը ստուերելու նպատակով անհետեւ կասկածներ յայտնել:

Այժմ շատուկ իշխան Սաղաթելեանի, Հայկ Մամիջանեանի եւ նրանց պէս «անհաւատների» համար իշեցնենք ՀՀ իշխանութեան տարբեր ներկայացուցիչների մի քանի յայտարարութիւններ, որոնք անառարկելիորէն ապացուցում են գերիների ուղղութեամբ դիւանագիտական տարբեր մակարդակներ-

Երբ Արամ Ա-ն Միացեալ Նահանգներում էր

Շաբ.ը էջ 6

ՎԱՐՐԱՍ ԱԹԱՆԵՍԵԱՆ

ԱՄՆ նախկին նախագահ, նախագահի հանրապետական թեկնածու Տանալտ Թրամփը հեռախօսազրոյց է ունեցել Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա-ի հետ: Այդ առթիւ Անթիլիասի տարածած հաղորդագրութեան մի դրուագ, կարծես, դուրս է մնում ուշադրութիւնից: Իսկ այնտեղ ասուած է, որ երբ Արամ Ա-ն վերջերս Միացեալ Նահանգներում էր, նրան հիւրանոցում այցելել են Թրամփի ներկայացուցիչներ եւ շնորհակալութիւն յայտնել:

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսը Միացեալ Նահանգներ է մեկնել, երբ Իսրայէլը ցամաքային ռազմագործողութիւն է սկսել Լիբանանի հարաւում, որ ուղեկցում է Պէյրութի թիրախային ուժակոծութիւններով: Որքանով էր նպատակայարմար, որ այդ իրավիճակում Արամ Ա-ն իր հոգեւոր հոտը թողնի «անտէր» եւ հայրապետական շրջացով Միացեալ Նահանգներ մեկնի:

Եւ եթէ ԱՄՆ-ում Թրամփի նախընտրական թիմի ներկայացուցիչները հիւրանոցում այցելել են նրան եւ շնորհակալութիւն յայտնել, ուրեմն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի հայրապետական շրջացը նախագահի հանրապետական թեկնածուի կողմից իր համար օգտակար է գնահատուել, շատ մեղմ ասած: Իսկ եթէ պայմանականութիւններից վերացարկու ենք, ապա կը ստացուի, որ Արամ Ա-ն Միացեալ Նահանգներ է մեկնել, որպէսզի Անթիլիասի հոգեւոր հօտին քարոզի, որ Նոյեմբերի 5-ին քուէարկեն Տոնալտ Թրամփի օգտին:

Ըստ երեւոյթին՝ այդ քարոզչութիւնն արդիւնաւէտ է եղել եւ

Թրամփը ներկայացուցիչների միջոցով շնորհակալութիւն է յայտնել Արամ Ա-ին: Թրամփ-Արամ Ա հեռախօսազրոյցի մասին տեղեկատուութիւնը պարզապէս նրանց քաղաքական համագործակցութիւնը գունազարդելու, Հայաստանի եւ Արցախի խնդիրների նկատմամբ մտահոգութիւններով եւ լուծում գտնելու պատրաստակամութեամբ քօղարկելու շատ բան ալ փորձ է:

Ընդ որում՝ այդ հեռախօսազրոյցը Հայաստանի եւ հայ ժողովրդի, Արցախի բռնատեղահանուած բնակչութեան համար աւելի քան վիրաւորական է: Միացեալ Նահանգներում անթիլիասական թեմերը կարող են նախագահական ընտրութիւններում որոշակի գերակատարութիւն ունենալ, բայց Արամ Ա-ն հայութեան հովուապետը չէ:

Հայաստանի, հայ ժողովրդի հոգեւոր կեդրոնը Սուրբ էջմիածինն է, որ Ամենայն հայոց կաթողիկոսի նստավայրն է: Լուսաւորչի աթոռի հոգեւոր գահակալը Գարեգին Բ-ն է, ոչ թէ Արամ Ա-ն, իսկ Հայաստանի, Արցախի բռնատեղահանուած բնակչութեան խնդիրներին լուծում գտնում կամ գտնուելու է, պէտք է գտնուի Երեւանում, ոչ թէ Պէյրութի Պուրճ Համուտ թաղամասում:

Այս իրողութեան հանդէպ, կարծում ենք, Թրամփ-Արամ Ա հեռախօսազրոյցին քաղաքական շահակալութիւն, ինչ-որ կարեւորութիւն տալու, մանաւանդ հետեւանքների մասին դատողութիւններ անելու որեւէ տրամաբանական

հիմք չկայ:

Անցեալ տարի Ստեփանակերտում կատարուած իշխանափոխութիւնն առաջինը Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսն է ողջունել: Եթէ մէկն իրեն նեղութիւն տայ եւ մամուլի էլեկտրոնային արխիւները նայի, կը հանդիպի Ստեփանակերտից Պէյրութ ուղեւորութիւնների, արցախցի բարձրաստիճան պաշտօնեաների եւ Արամ Ա-ի հանդիպումների մասին տեղեկութիւնների՝ սկսած 2022թ. Օգոստոսից, երբ Ատրպէյճանի պահանջով ռուսական զօրախումբը յանձնել էր Լաչինը, Աղաւնոն եւ Սոււրը:

Ինչ հարցեր են քննարկուել այդ այցելութիւնների ժամանակ, արցախցի պաշտօնեաներն ինչո՞ւ յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի աջակցութեան կամ օրհնանքի կարիքն են զգացել, ոչ թէ Ամենայն հայոց կաթողիկոսի: ԱՄՆ նախկին նախագահը, որի պաշտօնավարման վերջին ամիսներին է սկսուել Արցախի դէմ Ատրպէյճանի լայնածաւալ ագրեսիան, որ յայտնի է Իլհամ Ալիեւի մերձաւորագոյն շրջապատի անձանց հետ պիզնես կապերով, ինչո՞ւ է հաւատափոխ եղել եւ այսօր խոստանում է ապահովել արցախահայութեան իսրայէլ, անվտանգ եւ արժանապատիւ վերադարձը: Եւ մի հարց. իսկ այդ հեռախօսազրոյցի մասին Թրամփի գրասենեակը հաղորդարութիւն տարածե՞լ է: Եթէ՛ այդ, ապա ինչ է ասուած այնտեղ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնի հոն արտայայտուող բոլոր տեսակետները



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՊԵՏՏՈՒԹԵՐԹ՝
 ԱՌՅԻԱԼ ԴԵՍՈՒԿՐԱՏ ՅՆՉԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՍԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August


ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$75.00, \$150.00 (First Class)
 Canada \$ 250.00 (Air Mail)
 Overseas \$400.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՍԵՐ

Սրբուհի Գալեան Նշանակուած Ե ԶԶ Արդարադատութեան Նախարար

«Հիմք ընդունելով վարչապետի առաջարկութիւնը՝ համաձայն Սահմանադրութեան 131-րդ յօդուածի, ինչպէս նաեւ «Կառավարութեան կառուցուածքի եւ գործունէութեան մասին» օրէնքի 5-րդ յօդուածի 1-ին մասի. Սրբուհի Գալեանին նշանակել արդարադատութեան նախարար», - ըսուած է հրամանագրին մէջ:



Նորանշանակ նախարար Սրբուհի Գալեան
րի պաշտօնին առաջադրել Գալեանի թեկնածու

Յիշեցնենք, որ Գալեան նախապէս կը զբաղեցնէր ՀՀ գլխաւոր դատախազի տեղակալի պաշտօնը եւ կը համակարգէր ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման ուղղուած գործառնայթներու ոլորտը: Նոյեմբեր 4-էն ան պատուած է զբաղեցուցած պաշտօնէն, երբ ՔՊ վարչութեան մէջ որոշում կայացուած է նախարար

Տեղի Ունեցած Ե 430 Բնակարան Բաղկացած Բնակելի Զամալիրի Բացման Արարողութեան



Նախարար Գեորգ Պապոյեան կը կատարէ «Լոյսեր» բնակելի համալիրի բացումը

ՀՀ տնտեսութեան նախարար Գեորգ Պապոյեան Նոյեմբեր 2-ին մասնակցած է 430 բնակարանէ բաղկացած «Լոյսեր» բնակելի համալիրի բացման արարողութեան:

Բնակելի համալիրը ունի մէկ հեկտար կանաչապատ բակ՝ 140 ծառ եւ 1500 բուսատեսակ, հանգիստի գօտիներ, ժամանակակից խաղահրապարակներ եւ մարզական հրապարակներ՝ չափեցած անհրաժեշտ սարքաւորումներով:

Նախարարը ողջունելով ներկաները՝ նշած է, որ այսպիսի ծրագրերը վառ ապացոյց են, թէ արդիւնաւէտ պետական քաղաքականութիւնը ինչպէս կը նպաստէ ոլորտի զարգացման ու ընկերութիւններու կայացման:

Կառուցապատման ոլորտը կարեւորագոյն դեր ունի Հայաստանի բնակարանային ֆոնտի թարմացման, համայնքային զարգացման եւ

ամենակարեւորը՝ քաղաքացիներու կեանքի որակի բարձրացման հարցով: «Ուրախ եմ նաեւ նշել, որ «Լոյսեր» ընկերութիւնն իրական հատուածի այն սակաւաթիւ ընկերութիւններէն է, որն ընտրել է զբաղաւորուելի շուկայ գուրու գալու ուղին՝ օգտուելով շուկայի ֆինանսների ներգրաւման առաւելութիւններէն», - ըսած է նախարարը:

Ընկերութեան ՀՀ Տնտեսութեան նախարարութեան թողարկման եւ վարկանիշաւորման պետական աջակցութեան ծրագրի շրջանակին մէջ օժանդակութիւն տրամադուած է 30 միլիոն դրամի չափով: Յառաջիկայ երեք տարիներու ընթացքին ծրագրի պահանջները պահպանելու պարագային ընկերութիւնը կը ստանայ ընդհանուր 165 միլիոն դրամի աջակցութիւն:

Կարմիր Խաչի Ներկայացուցիչները Այցելած Են Արցախի Նախկին Ղեկավարներուն

Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտէի ներկայացուցիչները Պաքուի բանտին մէջ այցելած են Լեւոնային Ղարաբաղի նախկին քաղաքական եւ ռազմական ղեկավարներուն:

Այս մասին յայտնած է Կարմիր Խաչի Պաքուի գրասենեակի հանրային կայքերու պատասխանատունը՝ նշելով, որ հանդիպման ընթացքին կայանաւորուած գործիչներուն հետ դէմ առ դէմ հանդիպումներ կազմակերպուած են, անոնց համար «հարազատներու հետ կապ հաստատելու հնարաւորութիւն ստեղծուած է»:

Ըստ պաշտօնական տուեալներու՝ Ատրպէյճանի մէջ հիմա 23 հայ գերութեան մէջ է, անոնցմէ ութ հոգին Արցախի ռազմաքաղաքական նախկին ղեկավարութիւնն է:

Պաքու Արցախի նախկին պաշտօնեաներուն ծանր մեղադրանքներ առաջադրած է:

Ինձ Միամիտ Մարդու Տե՞ղ Դրած Եք, Արտահոսքը Պատահական Զ՛ըլլար. Անդրանիկ Քոչարեան

Ազգային ժողովի «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր, Պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեան լրագրողներու հետ զրոյցին արձագանգած է հարցումին, թէ արդեօք իշխող ուժի ներսը կա՞ն թեւեր, օրինակ՝ «քոչարեանական», «սիւնեանական»:



Պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեան

Ըստ էութեան՝ Քոչարեան բացառած է այդ՝ միեւնոյն ժամանակ նկատելով՝ «երբ թեւեր ըլլան, մտածելու շատ բան կ'ըլլայ»:

«Անդրանիկ Քոչարեանի թեւը Պաշտպանութեան եւ անվտանգութեան յանձնաժողովն է, որում մենք աշխատում ենք: Երբ թեւեր առաջանան, մեր պետութիւնը շատ մտածելու տեղիք ունի», - ըսած է ան:

Հարցումին՝ կա՞ն որեւէ առիթ եւ պատճառ, որ պատգամաւորներ Սիւսի Գաբրիէլեանը, Հրաչ Յակոբեանը, Երեւանի քաղաքապետի տեղակալ Արմէն Փամբուխչեանը եւ այլք կրնան դժգոհութիւններ ունենալ իրմէ, վերջինս պատասխանած է. «Ես ղեկավարում եմ Պաշտպանութեան եւ անվտանգութեան յանձնաժողովը, որտեղ երկրի անվտանգութեան վերաբերող բազմաթիւ հարցեր են քննարկուել, բազմաթիւ պաշտօնեաների անուններ են հնչել, բայց դա հանրային չի եղել: Դուք ասում էք՝ Արմէն Փամբուխչեան, ես նրա հետ վերջին անգամ շփում եմ ունեցել, երբ նա ղեկավարում էր ԱԻՆ-ը: Որպէս Երեւանի փոխքաղաքապետ՝ նրա հետ հեռախօսազրոյց եմ ունեցել մէկ անգամ, երբ Արմէն Խաչատրեանի հետ գտնուում էինք «Արագած» ռազմարդիւնաբերութեան գործարանում, եւ խնդիր կար, ես զանգել եմ նրան, ասել եմ՝ խնդիր կայ, ինչ-որ չիտովնիկ չի տալիս թոյլտուութիւն, որ 300 մ հեռաւորութեան վրայ միանան հոսանքի, ասաց՝ կը լուծենք: Մէկ ամիս անց օգնականիս ասել եմ՝

կապուիր, տես՝ հոսանքը միացաւ ենթակայանին, աշխատանքները աւարտուած են, ինձ զեկուցեցին, որ հակառակ որոշում են կայացրել, ոչ միայն միացուած չէ, այլ պէտք է միանայ Զովունի գիւղի ենթակայանին, դա արդէն վերջն էր»:

Անդրադառնալով իր անուան շուրջ վերջին օրերուն տարածուող խօսակցութիւններուն՝ Քոչարեան նկատած է. «Լուրերը պատահական չեն լինում, ինձ միամիտ մարդու տե՞ղ էք դրել, տեսէք՝ ինչ կառուցների ղեկավար եմ՝ «Մարտի 1-ի» փաստահաւաք խումբ, Քառօրեայ պատերազմի քննիչ յանձնաժողով, 44-օրեայ պատերազմի քննիչ յանձնաժողով, ինձ պատահական կարող են բան ասել: Հանգիստ մնացէք, թէ ինչ նպատակ ունէր արտահոսքը, պատահական չէ: Ամէն տեղ էլ կրնայ կուր ընկնի, կարեւորը ձեռնամարտի կամ կրակոցի չվերածուել, սա խորհրդարան է»:

Ըստ մամուլի հրապարակումներու, «Քաղաքացիական Պայմանագրին» մէջ Անդրանիկ Քոչարեանը պաշտօնէն հեռացնելու գործընթաց սկսած է:

Ընդդիմադիրները Կը Խօսին Բռնաճնշումներու Մասին, Բայց Ինչ Կ'ուզեն Կ'ըսեն. Յակոբեան

«Իրաւապահներն իրենց աշխատանքն են անում, ընդդիմութիւնն իր աշխատանքն է անում, երբ ուզում՝ հանրահաւաք է կազմակերպում»:

Ազգային ժողովին մէջ լրագրողներու հետ ձեպագրոյցի ժամանակ այս մասին ըսաւ «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր Հրաչեայ Յակոբեան՝ անդրադառնալով լրագրողի դիտարկման, թէ ընդդիմութիւնը իշխանութիւնը կը մեղադրէ բռնաճնշումներու համար. 18-ամեայ աղջիկները կը տանին ոստիկանութիւն գէնք բռնելու կասկածանքով:



«ՔՊ» խմբակցութեան պատգամաւոր Հրաչեայ Յակոբեան

«Իրենք գնում են նախագահական նստավայրի դիմաց, տարտեսակ պատասխաններով կանգնում, ինչ ուզում՝ անում են, ինչ ուզում՝ խօսում են ուղիղ եթերում, ու դուք խօսում էք բռնաճնշումներին: Եթէ կան բռնաճնշումներ, ապա ինչպէ՞ս ստացուէր, որ բռնաճնշումներին ներքոյ մարդիկ տարտեսակ պատասխաններով նախագահականի դիմաց բողոքի շարժում են իրականց-

նում: Զեր ասածն ու դա հակասում են իրար: Եթէ բռնաճնշումներ գործադրուէին, այդ արարքները չէին լինի, բայց երբ ուզում՝ բողոքի շարժում են անում, ինչ գրառումներով ասես՝ պատասխաններ բարձրացնում», - նկատեց Յակոբեան:

ԼՈՒՐԵՐ

Ռուսաստանի Ջետ Անուր Տնտեսական Կապերով Կապուած Ենք, Չնայած Տարածայնութիւններուն Քաղաքական Որոշ Դարցերու Մէջ. Սիրոյեան

ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանի խօսքով՝ Ռուսաստանի Դաշնութեան հետ Հայաստանի յարաբերութիւնները շատ թափանցիկ են. երկիրները ամուր տնտեսական կապերով կապուած են:

Այս մասին ան ասաց Ազգային ժողովին մէջ «Պիւտնին-2025»-ի նախագիծի նախնական քննարկման ժամանակ:

«Արտաքին քաղաքական որոշ հարցերում կան տարակարծութիւններ, միշտ էլ, որ մենք կիսում ենք միմեանց դիտարկումները: Դա վերաբերում է առանձին 1-2 հարթակի, որտեղ միասին անդամակցում ենք, օրինակ՝ ՀԱՊԿ-ը», - նկատեց ան:

Վերջինս շեշտեց, որ հայկական կողմին վերաբերմունքը այդ հարցին առնչութեամբ եւս հանրայայտ է:

«Մենք կարծում ենք՝ ՀԱՊԿ-ը պատշաճ չի արձագանգել ՀՀ սահմանների եւ ինքնիշխան տարածքի նկատմամբ ռազմական յարձակման եւ այլն: Բայց, ինչպէս նշեցի, կան մի շարք ուղղութիւններ, որտեղ մենք շարունակում ենք համագործակցութիւնը, օրինակ՝ ԵԱՏՄ շրջանակներում», - ընդգծեց նախարարը:



ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան

Արարատ Միրզոյեան Ազգային ժողովին մէջ յայտնեց, որ COP 29-ի գագաթաժողովին Երեւանի մասնակցութիւնը հաստատուած է:

«Մեր մասնակցութիւնը COP 29-ին որեւէ ձեւով հաստատուած է. հրաւերը ստացել ենք, որեւէ պաշտօնական արձագանգ եւ վերաբերմունք այս հարցում չենք դրսեւորել: Ի հարկէ, նաեւ չենք բացառում, բայց պէտք է հասկանանք՝ ինչի մասին է խօսքը», - նշեց ան:

Ռուսաստան Զի Դրդեր Երեւանը Եւ Պաքուն Հապճեպ Հաշտութեան Պայմանագիր Կնքելու, Այդ Լաւ Բանի Զի Յանգեցներ. Լաւրով

Ռուսական կողմը Երեւանն ու Պաքուն չի դրդեր հապճեպ խաղաղութեան պայմանագիր կնքելու:

Այս մասին RIA.ru-ի հետ հարցազրոյցին ըսած է Ռուսաստանի արտաքին գործերու նախարար Սերկէյ Լաւրով:

«Մենք կ'ողջունենք ատրպէյ-ճանա-հայկական խաղաղութեան գործընթացի շրջանակներուն մէջ ձեռք բերուած զգալի յառաջընթացը՝ հաշտի առնելով երկար տարիներու թշնամանքը, ռազմական գործողութիւնները եւ երկու կողմերուն զոհերը: Մենք կը հասկնանք, թէ որքան դժուար է Պաքուի եւ Երեւանի համար յառաջընթացի հասնիլը», - ըսած է ան:

Այդ ամէնը, ըստ Լաւրովի, կը պահանջէ ոչ միայն կողմերու զգալի ջանքեր՝ փոխընդունելի լուծումներ գտնելու համար, այլեւ ժամանակ:

«Այդ իսկ պատճառով, ի տարբերութիւն արեւմտեան կեղծ միջնորդներու, մենք մեր գործընկերները չենք մղեր հապճեպ խաղաղութեան պայմանագիր կնքելու», - նշած է Լաւրով՝ յաւելելով, որ Ռուսաստանը շահագրգռուած է Հարաւային Կովկասի մէջ խաղա-



Ռուսաստանի արտաքին գործերու նախարար Սերկէյ Լաւրով

ղութեամբ եւ կայունութեամբ:

Լաւրովի խօսքով՝ ռուսական կողմը վստահ է, որ հապճեպ խաղաղութիւնը՝ առանց Պաքուի եւ Երեւանի դիրքորոշումներուն, ինչպէս նաեւ իրողութիւններու համակողմանի դիտարկման, որեւէ լաւ բանի չի յանգեցներ, ընդհակառակը՝ ատրպէյ լարուածութեան եւ հակամարտութեան հնարաւոր սրման լրացուցիչ վտանգներ կը ստեղծէ:

COP17-ը Տեղի Պիտի Ունենայ Հայաստանի Մէջ

2026 թուականին Հայաստան պիտի հիւրընկալէ Կենսաբազմազանութեան կողմերի համաժողովը՝ COP17-ը:

Այս մասին յայտնած է ՀՀ կենսոլորտի նախարար Յակոբ Սիմիրեան: «65 ձայնով Հայաստանն ընտրուել է որպէս Կենսաբազմազանութեան կողմերի համաժողովի հիւրընկալող երկիր», - գրած է ան:

Նշենք, որ ընտրութիւնը կատարած են Գոլոմպիոյ Քալի քաղաքին մէջ ընթացող COP16-ի մասնակից երկիրները:

Միջոցառումը նուիրուած է բնապահպանական խնդիրներու քննարկման, կլիմայի փոփոխութիւնը դադրեցնելու եւ կենսաբազմազանութիւնը պաշտպանելու համար համաձայնեցուած լուծումներ գտնելուն:

Հայ-Ատրպէյճանական Սահմանին Հանդիպած Եւ Միտր Գրիգորեանը Եւ Շահին Մուսաբաֆաեւը



Միտր Գրիգորեան

Շահին Մուսաբաֆաեւ

2024թ. Նոյեմբեր 1-ին Հայաստանի Հանրապետութեան եւ Ատրպէյճանի Հանրապետութեան սահմանին տեղի ունեցած է Հայաստանի Հանրապետութեան եւ Ատրպէյճանի Հանրապետութեան միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգութեան հարցերով յանձնաժողովի եւ Ատրպէյճանի Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական յանձնաժողովի տասներորդ հանդիպումը՝ Հայաստանի Հանրապետութեան փոխվարչապետ Մհեր Գրիգորեանի եւ Ատրպէյճանի Հանրապետութեան փոխվարչապետ Շահին Մուսաբաֆաեւի նախագահութեամբ:

Ինչպէս յայտնած են ԱԳՆ-էն, հանդիպման ընթացքին, վերոնշեալ յանձնաժողովներու համատեղ գործունէութեան մասին 2024 թուականի Օգոստոս 30-ին ստորագրուած կանոնակարգի 7-րդ յօդուածին համաձայն, կողմերը փոխանակուած են իրենց պետութիւններուն կողմէ՝ կանոնակարգի ուժի մէջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերու իրականացման մասին ծանուցումներով:

Հաշտի առնելով, որ կանոնակարգի 7-րդ յօդուածով կը նախատեսուի, որ այն ուժի մէջ կը մտնէ

ալդպիսի ընթացակարգերը աւարտելու մասին վերջին գրաւոր ծանուցումը ստանալու օրը՝ կողմերը արձանագրած են, որ նշուած կանոնակարգը ուժի մէջ կը մտնէ 2024 թուականի Նոյեմբեր 1-ին:

Կողմերը միտքեր փոխանակած են սահմանազատման աշխատանքներու հետագայ իրականացման համար սահմանագիծի հատուածներու/հատուածամասերու հերթականութեան հարցին շուրջ:

Կողմերը քննարկած են սահմանազատման աշխատանքներու իրականացման կարգի վերաբերեալ համապատասխան ուղեցոյցներու նախագիծերը:

Կողմերը պայմանաւորուած են աշխատանքային կարգով համաձայնեցնել յաջորդ հանդիպման անցկացման ամսաթիւն ու վայրը:

Յանձնաժողովներու հանդիպման աւարտէն յետոյ Հայաստանի Հանրապետութեան փոխվարչապետ Մհեր Գրիգորեան եւ Ատրպէյճանի Հանրապետութեան փոխվարչապետ Շահին Մուսաբաֆաեւ առանձին քննարկած են ճանապարհային հաղորդակցութիւններուն վերաբերող հարցեր:

Յիշեցնենք՝ Հայաստանն ու Ատրպէյճանը Հոկտեմբեր 25-ին վաւերացուցած են երկու երկիրներու սահմանազատման յանձնաժողովներու համատեղ գործունէութեան կանոնակարգը:

Հայ Գերիներու Ազատ Արձակունը Մեծապէս Պիտի Օգնէ Երեւանի Եւ Պաքուի Հաշտեցման. ՌԴ-ի Մէջ ՀՀ Դեսպան

Ատրպէյճանի մէջ պահուող հայ գերիներու ազատ արձակումը մեծապէս պիտի օգնէ Երեւանի եւ Պաքուի հաշտեցման:

Ինչպէս յայտնած է ԹԱՍՍ-ը, լրագրողներու հետ զրոյցին այդ մասին ըսած է Ռուսաստանի մէջ Հայաստանի դեսպան Գուրգէն Արսէնեան:

«Ալդպիսի քայլը մեծապէս կը նպաստի հաշտեցմանը», - ըսած է Արսէնեան ու յաւելած, որ պահուող անձերու ազատ արձակման հետ կապուած մնացած հարցերը պէտք է ուղղել ատրպէյճանական կողմին:

Արսէնեան նաեւ ընդգծած է՝ եթէ Երեւանն ու Պաքուն կ'երթան խաղաղութեան պայմանագիր կնքելու ճանապարհով, կը պատրաստուին ամբողջ աշխարհին յայտարարելու, որ երկու պետութիւնները, ազգերը պիտի ապրին խաղաղութեան եւ համագործակցութեան պայմաններում մէջ, ապա պէտք է սկսին քայլերէ, որոնք կը գնահատուին:



Ռուսաստանի մէջ Հայաստանի դեսպան Գուրգէն Արսէնեան

Դեսպանը, ըստ աղբիւրին, չէ մեկնաբանած Ատրպէյճանի մէջ պահուող Ռուբէն Վարդանեանին վերաբերած առանձին հարցումը՝ շեշտելով, որ Երեւանի համար Հայաստանի քաղաքացիներուն միջեւ տարբերութիւն չկայ:

Օվեոն-Ռոն-Ալփ Տարածաշրջանի Քաղաքներու Պատուիրակութիւնը Այցելած Է Սիւնիք



Օվեոն-Ռոն-Ալփ տարածաշրջանի վեց քաղաքի պատուիրակութիւնը՝ տարածաշրջանի փոխնախագահ եւ Վիենի քաղաքապետ թիւերի Քոլաչի գլխավորութեամբ այցելած է Հայաստանի ռազմավարական տարածաշրջան՝ Սիւնիք: Այդ մասին X-ի իր էջով տեղեկացուցած է Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպան Օլիվիէ Տըքոթինյին:

«Նախագահ Լորան Վոքլէի նախաձեռնութեամբ երկու տարածաշրջաններուն միջեւ 2023 թուականի Մարտին հաստատուած յա-

րաբերութիւնները կը զարգանան եւ կը խորանան», - նշած է դիւանագէտը:

Ան տեղեկացուցած է, որ Պրոնի, Վլենի, Մոնանի, Սեն Շամոնի, Մոնթեյլիմարի եւ Լէ Փլուի ան Վելի ներկայացուցիչները հանդիպած են Սիւնիքի համայնքապետարաններուն մէջ գործընկեր քաղաքներու քաղաքապետներուն հետ: Սիւնիքի բոլոր քաղաքները շուտով քոյր քաղաքներ պիտի դառնան Օվեոն-Ռոն-Ալփ շրջանի քաղաքներուն հետ, յայտնած է դեսպանը:

Ապօրինի Գոյքի Բռնագանձման 3 Վճիռ Կայ

Ռուպերթ Քոչարեանի անուան հետ առնչուած 5-րդ ալիքը տեսագրութիւն մը պատրաստած է արդարադատութեան նախարարի ընտրութեան մասին: Տեսագրութեան մէջ նախ կ'ըսուի, որ վարչապետ Նիկոլ Փաշինեանը այդ պաշտօնին համար ակնյայտ նախընտրութիւն ունեցած է՝ գլխավոր դատախազի տեղակալ, ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման վարչութիւնը համակարգող Սրբուհի Գալեանը: Ապա լրագրողը ընդգծուած է վստահ կը յայտարարէ՝ «Փաշինեանի խմբի իշխանութեան աւելի քան 6 տարիներին ապօրինի գոյք վերադարձնելու որեւէ դատական գործ չկայ»:

Նախորդ օրն ալ Ազգային ժողովին մէջ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Յարութիւնեանի ճեպագրուցի ընթացքին մէկ այլ լրագրող կը հարցնէ՝ «որեւէ դատական վճիռ դեռ չկայ, ատիկա մեծ յաջողութիւն կ'որակէք»:

Այս պնդումները բացարձակապէս չեն համապատասխաներ իրականութեան: Ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման վճիռ կա՞յ. մէկի փոխարէն՝ երեք:

Անոնցմէ առաջինը կը վերաբերի Գագիկ Ծառուկեանի փեսային եւ դստեր, երկրորդը՝ Սերժ Սարգսեանի եղբոր՝ Լեօա Սարգսեանին փոխկապակցուած անձ Գէորգ Վարդանեանին: Երրորդը կը վերաբերի Սուրէն Գաբրիէլեանին:

Առաջին վճիռով յօգուտ Հայաստանի Հանրապետութեան պիտի բռնագանձուի 260 միլիոն դրամ:

Երկրորդ դէպքով դատարանը վճռած է Գէորգ Վարդանեանին յօգուտ Հայաստանի բռնագանձել մօտ 163 միլիոն 850 հազար դրամի անշարժ գոյք, 28 միլիոն 109 հազար դրամ գումար եւ երկու ընկերութիւններու մէջ մասնակցութիւն:

Երրորդ վճիռով պատասխանողէն պիտի բռնագանձուի շուրջ 350 միլիոն դրամի գոյք:

Բացի անկէ, ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման հայցերով կայացած են նաեւ հաշտութիւններ. անոնք վեց հատ են: Անոնց հիման վրայ Հայաստանի Հանրապետութեան փոխանցուած է ընդհանուր 7 անշարժ եւ 1 շարժական գոյք, ինչպէս նաեւ շուրջ 687 միլիոն դրամ:

Տեսագրութեան մէջ անդրադարձ կայ նաեւ Սրբուհի Գալեանի ունեցուածքին:

Ի դէպ, տեսագրութեան վերնագրին մէջ նշուած է՝ «գլխավոր դատախազի միլիոնատէր տեղակալը՝ արդարադատութեան նախարար»: Բովանդակութեան մէջ, սակայն, կը նշուի՝ Սրբուհի Գալեանը դրամային միլիոնատէր է: Իսկ հաշուի առնելով դրամի եւ տոլարի փոխարժէքները՝ կարելի է ըսել, որ վերնագիրը կեղծ է: Չնայած սուտ չէ՝ Սրբուհի Գալեանը իրօք դրամային միլիոնատէր է, սակայն վերնագիրը ակնյայտօրէն տոլարային միլիոնատիրով առնչութիւններ կը ստեղծէ, քանզի մէկ միլիոն դրամի ունեցուածքը նոյնիսկ մարդը միլիոնատէր կը դարձնէ: Այս տրամաբանութեամբ հանրապետութեան բնակչութեան 90 եւ աւելի տոկոսը, ով ունի մէկ միլիոն դրամ եւ աւելի գումար կամ գոյք՝ միլիոնատէր է:

5-րդ ալիքը, այսպիսով, կը փորձէ ներկայ պաշտօնեաները հաւասարեցնել իր հետ փոխկապակցուած տոլարային միլիոնատէր Ռուպերթ Քոչարեանին, որուն մասին հանրութեան ընկալումը միանշանակ է: ՀՀ քաղաքացիները յստակօրէն կը պատկերացնեն, թէ ինչ ճանապարհով Ռուպերթ Քոչարեանն ու իր ընտանիքը դիզած են իրենց ունեցուածքը: Ի դէպ, նշենք, որ անոնք եւս ապօրինի գոյքի բռնագանձման գործով «չահառուներ են»: Դատախազութիւնը անոնցմէ եւս կը պահանջէ բռնագանձել կուտակած ապօրինի ունեցուածքը:

Ինչպէ՞ս Ազրած Են Ռուսաստանի Մէջ Այլազգիներու Դէմ Խստացումները Արտագնայ Աշխատանքի Մեկնող Հայերուն Կրայ

Արման Նիկոլեանը 2018 թուականէն պարբերաբար Ռուսաստան կը մեկնէր՝ արտագնայ աշխատանքի, սակայն Ռեքրանիոյ դէմ ռուսական լայնածաւալ պատերազմը փոխած է նաեւ անոր ծրագրերը:

30-ամեայ տղամարդը կ'ըսէ՝ Հայաստանի մէջ տնտեսական իրավիճակ կը ստիպէր հեռանալ, բայց անցեալ տարուայ Սեպտեմբերէն անոր համար նախընտրելի է ապրիլ ու աշխատիլ Հայաստանի հարաւը գտնուող Մալիշկա գիւղին մէջ, քան հազարաւոր քիլոմետրեր կտրել-անցնիլ եւ ստանալ նոյն վարձատրութիւնը, որ քան այստեղ:

«Լաւ էր սկզբնական շրջանում: Բայց վերջին մէկ-երկու տարին, երբ պատերազմ էր իրենց մօտ, ահագին փոփոխութիւն էր զգացում՝ փոխարժեքը էն չէր, ճիշդն ասած՝ հայերին էլ մի տեսակ տեղ չէին տալիս, բնակութեան վայրի գրանցման հետ կապուած էլ ահագին բարդութիւններ կային», - ըսաւ Նիկոլեան:

Պաշտօնական տուեալներով՝ 2022 թուականի տարեվերջին Հայաստանէն արտագաղթի հոսքերը դէպի Ռուսաստան նուազած էին 8,7 տոկոսով, 2023 թուականէն մինչեւ այսօր միտումը կը շարունակէ պահպանուիլ: Հայաստանէն արտագաղթի հոսքերը դադրած էին նաեւ 20 թուականին՝ քովտի համաճարակի ժամանակ, սակայն այդ ժամանակ պատճառը փակ սահմաններն էին:

Կեդրոնական դրամատան վերլուծութեան համաձայն՝ արեւմտեան ծանր պատժամիջոցներու տակ յայտնուած Ռուսաստանը աշխատանքային գաղթողներու համար

այլեւս գրաւիչ չէ, քանի որ աշխատավարձերու տարբերութիւնն ալ այդքան մեծ չէ նախկինին համեմատ:

Ռուպլի փոխարժէքի կտրուկ անկումը հիմնական, բայց միակ պատճառը չէ: Ռուսաստանի մէջ այլազգիներու դէմ խստացումներ սկսած էին 2018 թուականէն, բայց գաղթողներու վիճակը աւելի ծանրացած է այս գարնան Մոսկուայի «Քրոքուս» համերգասրահին մէջ տեղի ունեցած ահաբեկչութեանէն յետոյ, որ ենթադրաբար իրականացուցած էին Տաճիկստանի քաղաքացիները: Այս խստացումներու ալիքէն յատկապէս տուժեցին կեդրոնական Ասիայէն ժամանած աշխատանքային գաղթողները: Սակայն Արման Նիկոլեանի տպաւորութեամբ՝ նոյն վերաբերմունքը կայ նաեւ հայերու նկատմամբ:

«Շատ էին սկսել ստուգել այլազգիներին: Մի ժամանակ, երբ կանգնեցնում էին փաստաթղթերի ստուգման համար, մի տեսակ ուրախ էին, որ հայ ենք, բայց հիմա զգացում է, որ էնքան էլ ուրախ չեն, որ հայ ենք», - նշեց ան:

2024 թուականին Ռուսաստանին մէջ իրականացուած հարցախույզերը կը փաստեն, որ բնակչութեան 70 տոկոսը կողմ է իշխանութիւններու նախաձեռնած սահմանափակումներուն: Հարցուածները կը կարծեն, որ պէտք է սահմանափակել գաղթականներու եւ անոնց ընտանիքներուն մուտքը իրենց հայրենիք: Ռուսաստանի Ներքին գործերու նախարարութեան տուեալներով՝ երկրին մէջ աւելի քան 6 միլիոն օտարերկրացի կը բնակի, որոնցմէ 740 հազարը՝ անօրինական: Աղբիւր՝ «Ազատութիւն»

Լաիկ Դատարանը Հայաստան Ընդդէմ

Շարունակուած էջ 1-էն

Դատարանի իրաւասութեան վերաբերեալ եւ Դատարանի կանոնակարգի 79-րդ յօդուածի 3-րդ մասի համաձայն, գործի վարոյթը կասեցուցաւ մինչեւ նշուած նախնական առարկութիւններու վերաբերեալ Դատարանի որոշման հրապարակումը:

2023 թուականի Ապրիլ 25-ի որոշմամբ Դատարանի նախագահի սահմանուած ժամկէտին մէջ

Դատախազութիւնը Ռուպերթ Քոչարեանին եւ անոր հետ փոխկապակցուած եօթը անձէ (ընտանիքի անդամներէն) յօգուտ Հայաստանի կը պահանջէ բռնագանձել 25 միլիարդ անշարժ գոյք, 5 փոխադրամիջոց, մասնակցութիւն հայաստանեան եւ արտասահմանեան 16 իրաւաբանական անձի մէջ, աւելի քան 4 միլիոն ԱՄՆ տոլարի աւանդարժեթուղթ, շուրջ 10 միլիարդ դրամին համարժէք փոխառութիւններու պահանջի իրաւունք, աւելի քան 35 միլիարդ դրամ:

Ահա Քոչարեաններու պարագային լիարժէքօրէն կարելի է օգտուործել միլիոնատէր եզրոյթը՝ տոլարային, եւ՝ ոչ մէկ կամ մէկ տասնեակ:

Իսկ Սրբուհի Գալեանը 2023 թուականին յայտարարագրած է

Հայաստան ներկայացուց իր գրաւոր դիտարկումներն ու դիրքորոշումը Ատրպէյճանի նախնական առարկութիւններուն վերաբերեալ:

Հայաստան ընդդէմ Ատրպէյճանի գործով վճիռի հրապարակումէն անմիջապէս յետոյ դատարանը պիտի հրապարակէ իր վճիռը՝ Ատրպէյճանը ընդդէմ Հայաստանի գործով՝ Հայաստանի կողմէ ներկայացուած նախնական առարկութիւններուն վերաբերեալ:

տարեկան 33 միլիոն դրամ, մէկ հողամաս եւ երկու բնակարան:

Նշենք, որ Յուլիս 29-ի դրութեամբ դատարան ներկայացուած է ապօրինի գոյքի բռնագանձման պահանջով 106 հայցադիմում: Այս հայցադիմումներով Գլխավոր դատախազութեան ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով վարչութիւնը յօգուտ Հայաստանի կը պահանջէ բռնագանձել 1150 անշարժ եւ 225 շարժական գոյք, 300 իրաւաբանական անձի մէջ մասնակցութիւն: Բոլոր հայցադիմումներու հանրագումարային արժէքը է 559 միլիարդ 687 միլիոն դրամ: Այս գումարին մէջ ներառուած չէ իրաւաբանական անձերու մէջ մասնակցութեան, նաեւ շարք մը գոյքերու արժէքները:

ԱՆՃՆՈՒԷՐ ՎԵԹԵՐԱՆՆԵՐՈՒ ՕՐԻՆԱԿՈՎ («ՁԻՆԱՊԱՊԱՐԻ ՕՐ»ՈՒՆ ԱՆՔԻՆ)



ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՅԱՆ Յ. ԹՈՒԹԻՎԵԱՆ

Ազգերու մեծ ընտանիքը ամէն տարի Նոյեմբեր 11-ին կ'ոգեկոչէ «Ձինադադարի Օր»-ը, ի յիշատակ այն բոլորին, որոնք իրենց կեանքը զոհած են իրենց հայրենիքին համար. օր մը, որ յարգանքի տուրք կ'ընծայէ ապրող այն բոլոր վեթերաններուն, որոնք վերապրողներ են պատերազմներու արհաւիրքին:

Ամերիկայի Միացեալ Նահանգները 1950-ական թուականներէն ի վեր այս տօնը կը կոչեն Վեթերաններու Օր: Եւրոպական երկիրներ, ինչպէս Անգլիա, Ֆրանսա եւ այլ երկիրներ նոյն օրը, Նոյեմբեր 11-ը, կը տօնեն որպէս Ձինադադարի Օր՝ յիշատակելու համար Առաջին Համաշխարհային Պատերազմի վերջաւորութիւնը, զինադադարը, որ տեղի ունեցաւ Նոյեմբեր 11, 1918 թուականին:

1919-ին Միացեալ Նահանգներու նախագահ Վուոորդ Ուիլսոնը՝ Նոյեմբեր 11-ը հռչակեց որպէս Ձինադադարի Օր՝ յիշեցնելու համար ամերիկացի ժողովուրդին պատերազմի ողբերգութիւնը: 1954-ին, Միացեալ Նահանգներու Գոնկերէսը՝ Ձինադադարի Օրը փոխեց Վեթերաններու Օր-ուան՝ ի յարգանս Ամերիկայի բոլոր վեթերաններուն, զինեալ ոյժերու մէջ ծառայող արանց եւ կանանց:

«Վեթերաններու Օր»-ուան կամ Ձինադադարի Օր-ուան առթիւ երբ կը մտածենք բոլոր վեթերաններու մասին, չենք կրնար, որպէս հայ, չմտածել նաեւ այն բոլոր հայագրի վեթերաններու մասին, որոնք իրենց կեանքը զոհեցին իրենց «Երկրորդ Հայրենիք»-ներուն համար:

Բայց աւելին, որպէս հայ, Վեթերաններու Օրուան առթիւ, չենք կրնար չյիշել մեր Հայրենիքի, Հայաստանի Վեթերանները որոնք, ինչպէս երէկ, այսօր ալ իրենց կեանքը ողջակէզի սեղանին վրայ դնելու պատրաստակամութիւնը կը ցուցաբերեն: Իրօք, ի՞նչ սրտառուէչ երեւոյթ է երբ մարդ մը իր հայրենիքին համար յօժարակամ է ո՛չ միայն իր ժամանակը, իր տաղանդը, իր ոյժերը նուիրելու, այլ նոյնիսկ իր կեանքը զոհելու:

Վեթերաններու Օրը կամ Ձինադադարի Օր-ը նաեւ պատգամ մը ունի մեզի այն իմաստով որ մենք ալ կոչուած ենք վերարտադրելու, պահելու եւ պահպանելու անհաճախող իր հայրենասէր վեթերաններուն ոգին: Վեթերանները այն նուիրեալ անձերն են, որոնք իրենց հայրենիքին ազա-

տութեան համար զոհած եւ զոհուած են, տուած ու տրուած են: Ամէն քաղաքացիի առանձնաշնորհուածն ու պատասխանատուութիւնն է ընել իր լաւագոյնը այդ վսեմ իտէյալին համար: Ամէն քաղաքացի, զինեալ ոյժերու մէջ ըլլալ թէ ոչ, բարոյական պարտաւորութիւնն ունի պահպանելու եւ պաշտպանելու իր հայրենիքին ազատութիւնը: Ազատութիւնը անքակտելիօրէն գոյուած է հաւատարմութեան հետ: Քաղաքական ազատութիւնը ո՛չ միայն առանձնաշնորհուած է եւ իրաւունք է, այլ նաեւ մեծ պատասխանատուութիւն:

Ո՛չ մէկ ռամկավար պետութիւն (դեմոկրատի) կրնայ ապրիլ, մեծնալ եւ ուճանալ առանց իր քաղաքացիներու հաւատարմութեան: Թերեւս ասիկա ի մտի ունենալով է որ ամերիկացի մեծանուն նախագահ Ճան Քենեդիին թէ՛ հայրենիքը ինչ կրնայ ընել քեզի համար, այլ հարց տուր թէ՛ դո՛ւն ի՞նչ կրնայ ընել հայրենիքին համար:» Ահա՛ այս հոգեբանութիւնն է որ կը կերտէ ու կը պահէ ժողովրդավար սկզբունքներով կառավարուող հասարակութիւն մը:

Ասիկա ճշմարիտ է ե՛ւ Ամերիկայի համար, ե՛ւ Հայաստանի համար, եւ որեւէ դեմոկրատի համար: Երկրի մը քաղաքացիները պէտք է իրազեկ ըլլան իրենց իրաւունքներուն, բայց նաեւ գիտակցելու են այն պատասխանատուութիւններուն, որ կ'ակնկալուի լիիրաւ քաղաքացիէ մը: Երկրի մը քաղաքացիները իրենք զիրենք նուիրելու են հայրենիքին շահերը պաշտպանելու արտաքուստ թշնամիներէ, միանգամայն նաեւ պահպանելու իւրաքանչիւր քաղաքացիի անհատական իրաւունքները:

Իւրաքանչիւր սերունդ ունի իր դերն ու պարտքը իր հայրենիքի նկատմամբ: Այդ սերունդի ամէն մէկ անդամը գիտակցելու է, թէ՛ հայրենիքին ծառայել, հայրենիքի պահպանումին եւ վերելքին սատարելը ե՛ւ փառք է, ե՛ւ պարտք է:

Ռուս գրագէտ Թուրկենեւ սովոր էր ըսելու. «Հայրենիքը կրնայ ըլլալ առանց մեզմէ՛ ոեւէ մէկուն, բայց մենք չենք կրնար ըլլալ առանց հայրենիքի»: Ամէն քաղաքացի, ամէն հայ ունենալու է կեանքի այս փիլիսոփայութիւնը:

Վեթերաններու Օր-ը կամ Ձինադադարի Օր-ը նաեւ կը պատգամէ մեզի, որ մեր հայեացքը միայն անցեալին չսեւեռենք, այլ նաեւ ապագային, քանի որ ապագան կերտողները մենք պիտի ըլլանք՝ ներկայի մեր տեսիլքով եւ ջանքերով: Վաղուան հունձքը այսօրուան

ԴԻՆԱՊԱՊԱՐԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՃԱՊ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Շարունակուած էջ 2-էն

րում տարուող աշխատանքի մասին:

Աժ փոխնախագահ Յակոբ Արշակեանը մասնաւորապէս ս.թ. Փետրուարին հայաստան ժամանած ՌԴ Դաշնային Ժողովի Դաշնութեան խորհրդի նախագահի տեղակալ Իւրի Վորոբեյովի հետ հանդիպման ժամանակ ազդարարել էր՝ «հայաստանն ակնկալում է, որ Ռուսաստանի Դաշնութիւնը ջանքեր կը գործադրի հայ գերիներին Հայաստան վերադարձնելու, ինչպէս նաեւ Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային ժառանգութիւնը պահպանելու համար»:

Ս.թ. Փետրուարին Աժ-կառավարութիւն հարցուպատասխանի ժամանակ պատասխանելով «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Լիլիթ Գալստեանի հարցին՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանը նշել էր. «մեր բանակցութիւններում եւ շփոթումներում մշտապէս գերիներ, պահուող անձանց խնդիրն օրակարգում է եւ մենք այդ հարցերը շարունակաբար քննարկում ենք, դնում ենք քննարկումների սեղանին: Եւ նաեւ հասկանալի է, որ դա շատ զգայուն հարց է, եւ շատ երկար ժամանակ մենք գերիների վերադարձ չունէինք, բայց ստացուեց այնպէս, որ 2023 թուականի Դեկտեմբերին մեզ յաջողուեց մեր 32 գերեզմարուած եղբայրներին վերադարձնել: Ինչպէս նախկինում, այսօր էլ գերիների, պատանդների, այլ պահուող անձանց ազատ արձակման եւ վերադարձի հարցը շարունակում է մնալ մեր օրակարգում»: Գալստեանը, յիշեցնելով, նախորդ շաբաթ էլ Աժ-կառավարութիւն հարցուպատասխանի ժամանակ կրկին բարձրացրեց գերիների հարցը եւ վարչապետը համանման պատասխան տուեց:

Վարչապետն, ի դէպ, Սեպտեմբերի 18-ին էլ՝ Համաշխարհային հայկական գագաթնաժողովի ժամանակ, ազդարարեց՝ «Խաղաղութեան պայմանագիրը պէտք է լուծի գերիների հարցը, ոչ թէ նրանց մասին յիշատակումը պայմանագրում»:

Ս.թ. Հոկտեմբերի 19-ին ՀՀ Աժ նախագահ Ալեն Սիմոնեանը Չեխիա կատարած պաշտօնական այցի շրջանակում, հանդիպելով նաեւ Չեխիայի խորհրդարանի Պատգամաւորների պալատի Չեխիա-Հայաստան բարեկամական խմբի նախագահ Մարիկ Բենդայի հետ, անդրադարձել էր Ատրպէյճա-

նում պահվող հայ ռազմագերիների հարցին: Աժ նախագահը Սեպտեմբերի 9-ին ընդունելով Լիւքսեմբուրգի Մեծ Դքսութեան փոխվարչապետ, արտաքին գործերի եւ արտաքին առևտրի նախարար Քապլիէ Բետելի գլխաւորած պատուիրակութեանը՝ յոյս էր յայտնել, որ Լիւքսեմբուրգը եւս ջանքեր կներդնի հայ գերիներին Հայաստան վերադարձնելու հարցում: Հոկտեմբերի 15-ին էլ ժնեւում հանդիպելով միջխորհրդարանական միութիւնում Դանիայի պատուիրակութեան ղեկավար Սիորէն Սիմոնդերգաարդի հետ՝ Ալեն Սիմոնեանը կրկին բարձրացրել էր Ատրպէյճանում պահուող հայ ռազմագերիների խնդիրը:

ԱԱԾ տնօրէն Արմէն Աբաղեանն էլ Հոկտեմբերի 28-ին է յայտարարել, որ առաջիկայում սպասում է գերիների եւ անհետ կորածների հարցով հանդիպում ադրբեջանական կողմի հետ: Նախքան այդ էլ՝ Հոկտեմբերի 25-ին, ՀՀ ազգային անվտանգութեան ծառայութեան տնօրէնի գլխաւորութեամբ տեղի էր ունեցել գերիների, պատանդների եւ անհետ կորած (գտնուելու վայրն անյայտ) անձանց հարցերով զբաղուող միջգերատեսչական յանձնաժողովի հերթական նիստը:

Եւս մէկ յիշեցում. Եւրոպական Խորհրդարանը «Ատրպէյճանում իրավիճակի, մարդու իրաւունքների ու միջազգային իրաւունքի խախտումների եւ Հայաստանի հետ յարաբերութիւնների» վերաբերեալ վերջերս ընդունուած բանաձեւում եւս կոչ էր արել Ատրպէյճանին ազատ արձակել հայ գերիներին եւ ապահովել ԼՂ հայութեան անվտանգ վերադարձը: Եթէ հայրենի ընդդիմադիր երեսփոխաններին թւում է, թէ այս բանաձեւը ՀՀ դիւանագիտական կորպուսի անուշի աշխատանքի արդիւնքը չէ, ապա ոչինչ չի հասկանում դիւանագիտութիւնից: Բայց ավելի հաւանական է, որ շատ լաւ էլ հասկանում է, բայց իրեն դնում է յայտնի կենդանու կարգավիճակում եւ այդ կարգավիճակին հարկը յայտարարութիւններ անում:

Նշենք, որ ըստ պաշտօնական տուեալների՝ Ատրպէյճանում հիմա 23 հայ է գերութեան մէջ, նրանցից 8-ը Արցախի ռազմաքաղաքական նախկին ղեկավարութիւնն է: Հաստատուած գերիների ցանկում անհետ կորած զինծառայողները կամ խաղաղ բնակիչների անուններ չկան:

«ՍԻՎԻՔ»

սերմանումէն կախեալ է:

Արդ, որպէս հայ, ամերիկահայ կամ սփիւռքահայ, հարց տալու ենք մենք մեզի թէ՛ ի՞նչ տեսակ բարոյական ժառանգութիւն պիտի թողունք յետնորդ սերունդներուն: Արդեօք ազատութեան, արդարութեան, մարդկային արժանապատուութեան գիտակցութիւնը պիտի կրնա՞նք դրոշմել ապագայ սերունդի պատկանող անդամներու սրտերուն ու հոգիներուն մէջ:

Վեթերաններու Օր-ը կամ Ձինադադարի Օր-ը առիթ մը կ'ընծայէ մեզի ո՛չ միայն մեր երախտագիտութիւնը յայտնելու՝ հայրենիքին եւ մեր «Երկրորդ հայրենիք»-ներուն համար զոհուող բոլոր վեթերաններուն, այլ նաեւ ուխտելու թէ՛ մենք՝ ապրողներս ալ մեր լաւագոյնը պիտի ընենք մեր հայրենիքին ու «Երկրորդ հայրենիք»-ներուն Ֆիզիքական ապահովութեան եւ վերելքին համար:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎԱՍԱՇԵԼԻ ԱՂԲԻՐԸ ԸԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Դասախօսական Երեկոյ Դոկտ. Ջրաջ Չիլինկիրեան «21-րդ Դարուն Սփիւռքի Մէջ Ապրիլ Եւ Հայ Մնալ» Խորագրով



ԱՆԻ ՍԱՐՍԵԼԵԱՆ

Կ ա գ մ ա կ ե ռ պ ու լ թ ե ա մ ք ` «Չուարթնոց» մշակութային միութեան աշխույժ վարչական կազմին՝ հովանավորութեամբ՝ թեմիա Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի Հինգշաբթի, Հոկտեմբեր 24-ի երեկոյեան ժամը 7-ին Արմէն Համբար սրահին մէջ տեղի ունեցաւ «21-րդ Դարուն սփիւռքի մէջ ապրիլ եւ հայ մնալ» խորագրով դասախօսական երեկոն:



Հետաքրքրաշարժ եւ բովանդակալից վերնագիր կրող այս դասախօսական երեկոն սկիզբ առաւ վարչութեանս ատենապետ Տոքթ. Սիմոն Սիմոնեանի բացման խօսքով, բարի գալուստ մաղթելէ ետք Տօքթ.Սիմոնեան ներկայներուն ներկայացուց Արեւմտեան թեմի հաստատութիւններու նորարութեան տնօրէն օրուայ բանախօս՝ Դոկտ. Ջրաջ Չիլինկիրեանի պատուաբեր կենսագրականը:

Գեղարուեստական յայտագիրը սկիզբ առաւ տաղանդաւոր դաշնակարուհի Արմինէ Ղազարեանի հիանալի կատարողութեամբ, ետքը՝ ասմունքող Անի մարսէլեան կարգաց ժագ Յակոբեանի «մեզի հայ կ'ըսեն» Գէորգ Էմինի «Ջարմանալի հայ» բանաստեղծական կտորներէն հատուածներ:

Իւրաքանչիւր սփիւռքահայի մտատանջութիւն եւ մտահոգութիւն հանդիսացող Դոկտ. Ջրաջ Չիլինկիրեան, ներկայացուց օրուայ նիւթին հետ առընչուած բոլոր ուսումնասիրութիւնները հարցադրումներն ու հետազոտութիւ-

ները որ կատարած էր Սփիւռքի մէջ եւ աշխարհի բոլոր ծագերուն ապրող հայ ազգի զաւակներուն հետ, պարզելով հայկական ինքնութիւնը կազմաւորող ազդակներուն պահպանման, մաքառումին, երազներուն եւ հեռանկարներու մասին անոնց հայեացքն ու տեսակէտը աշխարհն տիրապետող արդի արհեստագիտութեան եւ յառաջդիմութեան հետ զուգահէր քայլեր պահելով, երբ անոնք սահմանուած են մեր մշակույթի սովորութիւններու եւ հայպահպանման չափերու աւանդութիւններու հիմքերով:

Դոկտ. Չիլինկիրեան տոկոսալին արդիւնքներով պատասախ վրայ ցուցադրեց այն արդիւնաբեր արտադրանքը որ ունեցած է մեծ թիւով սփիւռքի մէջ սփռուած ու օտար ափերու վրայ ապրած հայ ազգի եւ նոր սերունդի հայ երիտասարդներու հետ պարզելով ու բացայայտելով անոնց 21-րդ դարուն հայ մնալու մօտեցման ձեւերն:



ու հնարաւորութիւններուն լատեսութեամբ ու յուսադրելի պատկերացումով: Յարգելով նոր սերունդի նոր գաղափարներն ու մտապատկերները որոնք կը հարկ է յարակից ըլլայ Նորագոյն ժամանակին պատկանող սկզբունքներուն հետ, պահելով մեր արմատներուն կապող հայկական արժէքները:

Աւարտին՝ յարգարժան դասախօսը պատասխանեց ներկայներուն հարցումներուն բաժնելով անոնց մտահոգութիւնները սփիւռքի մէջ հայ մնալու յուսադրիչ եւ պայծառ ու փայլուն ապագայի հեռանկարով:

45 Ամեակ Կլէնտլի Հայ Նազովրեցի Եկեղեցի Եւ Հայոց Ցեղասպանութեան Խաչքարի Յուշարձանի Նուիրում



Կլէնտլի Հայ Նազովրեցի Եկեղեցին, որ առաջին Հայ Աւետարանական Եկեղեցին է Կլէնտլի մէջ, կը տօնէ իր հիմնադրութեան 45-րդ ամեակը:

Ա. 5 Հոկտեմբեր 2024-ին, տեղի ունեցաւ Եկեղեցու 45 ամեակի փառաբանական ճաշկերոյթը:

Եկեղեցու Ալաճաճի սրահը լեցուած էր 200-է աւելի եկեղեցու անդամներով եւ բարեկամներով, որոնք ուրախութեամբ եւ գոհունակութեամբ ներկայ եղան եւ Աստուծոյ փառք տուին եկեղեցու ծառայութեան համար:

Գեղարուեստական յայտագրին կողքին եւ պատմական տեսաերկի ներկայացումէ ետք, արտասանուեցան շնորհակարարական խօսքեր եւ ապա Եկեղեցու Ալաճ Հովիւ՝ Վեր. Սերոբ Մկրտիչեան իր պատգամը փոխանցեց, ուր գնահատանքով անդրադարձաւ եկեղեցու անցեալի Հովիւներուն, ինչպէս նաեւ անցեալի եւ ներկայի բոլոր նուիրական ծա-

ռայողներուն եւ նուիրատուներուն ու շէշտը դրաւ Եկեղեցու մարտահրաւէրներուն, ռազմավարութեան եւ ապագայի ծրագիրներուն վրայ:

Ճաշկերոյթը վերջացաւ 45-ամեակի կարկանդակի հատուծով, փառաբանութեան երգով եւ Վեր. Մկրտիչեանի Օրհնութեան աղօթքով:

Բ. Կիրակի, 6 Հոկտեմբեր 2024, յատուկ օր մըն էր, Հայ Նազովրեցի Եկեղեցին եւ Կլէնտլի գաղութին:

Եկեղեցու պաշտամունքի ընթացքին Եկեղեցու Ալաճ Հովիւր՝ Վեր. Սերոբ Մկրտիչեան անդրադարձաւ խաչվերացի եւ Վարագայ խաչի տօներուն եւ շէշտեց Տէր Յիսուս Քրիստոսի խաչին կարեւորութիւնը եւ Անոր պատգամը ուղղուած իւրաքանչիւր հայորդիի:

Ապա խուռներամ ժողովուր-

Շար.ը էջ 19

Homenmen Ladies Auxiliary
Invites You To

FAMILY NIGHT PARTY

Autumn Gathering
Maza, Drink & Dance

Entertainment By:
International Singer
Zaven Batanian

NOVEMBER
15th

7:30 PM Donation \$60

1060 Allen Ave, Pasadena, CA. 91104
For Reservations Please Call
Lena: (626) 485-6434

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան 105-րդ Տարեփոխարկի Ծաշկերոյթը Կը Յարգէ իր Գործադիր Տնօրէն՝ Զաւէն Խանճեանի Յիշատակը



Athens 2024-09-26

ԼՈՒԻՉԱ ԾԱՆՊԱՁԵԱՆ ԱՅՍԸ-ի Հանրային Կապերու Համակարգող

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան (ԱՀԱԸ) 105-րդ Տարեփոխարկի Ծաշկերոյթը տեղի ունեցաւ Շաբաթ՝ Հոկտեմբեր 19, 2024-ին, Մոնթրէալի Sheraton Laval Պանդոկին մէջ՝ Գանատա: Հանդիսավարներ՝ Ռաֆֆի եւ Արփի Շնորհօքեանները ջերմօրէն ողջունեցին ներկաները եւ բարի գալուստ մաղթեցին Հայերէն, Անգլերէն եւ Ֆրանսերէն լեզուներով:

«Մեր հանգուցեալ Գործադիր Տնօրէն Զաւէն Խանճեան փափաքած էր այս տարուայ ծաշկերոյթը նուիրել մեր երիտասարդութեան (Celebrate Our Youth),» ըսաւ Պր. Շնորհօքեան իր բացման խօսքին մէջ: «Ոմանք կրնան պնդել, որ նման տօնակատարութիւն յարմար չէ այս գիշեր, նկատի առնելով Պր. Խանճեանի անսպասելի եւ անժամանակ մահը քանի մը ամիսներ առաջ: Այսուամենայնիւ, ես համոզուած եմ, որ լաւագոյն միջոցը, որով մենք կրնանք յարգել զինք, անոր տեսլականը պահպանել է եւ շարունակել այն ճանապարհը, որ

ան վարած էր վերջին 10 տարիներու ընթացքին: Աւետարանչականը ներդրումներ կատարած է բազմաթիւ ծրագիրներու, աջակցելու եւ խրախուսելու երիտասարդները՝ ըլլալ այդ կրթաթոշակներով, ամառնային ճամբարներով, կամ երիտասարդաց առաջնորդներու միջոցով: Այսօր մենք այստեղ հաւաքուած ենք նշելու մեր ձեռքբերումները եւ շնորհակալութիւն յայտնելու Աստուծոյ այն ամէն բանին համար, ինչ որ Պր. Խանճեան ըրած է Աւետարանչականի միջոցով:»

Գանատայի եւ Հայաստանի Ազգային Քայլերգներէն ետք, Մոնթրէալի Հայ Աւետարանական Առաջին Եկեղեցիի Հովիւ՝ Վեր. Ճորճ Տապաօ մատուց բացման աղօթքը: Ապա, ՀՀ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան ՆԳ Անահիտ Հարութչոյանը ողջունեց ներկաները եւ բարձր գնահատեց ԱՀԱԸ-ը իր ստեղծման օրուէն ի վեր աշխարհասփիւր Հայութեան եւ յատկապէս մեր Հայրենիքի քոյրերուն եւ եղբայրներուն մատուցած ծառայութեան եւ առաքելութեան համար: «Ներդրումներ երիտասար-

դութեան» (Investing in Youth) թեմայով տեսահոլովակի մը ներկայացումէն ետք Երզնուհի Սիլվի Տէմիրճեան, դաշնակահարուհի Անահիտ Միմոնեան եւ ջութակահարուհի Եւա Շահպազեան հրամցուցին սիրուած հոգեւոր երգերու փունջ մը:

Ընթրիքէն ետք, երաժիշտները շարունակեցին յայտագիրը հրամցնելով Հայկական սիրուած երգերու եւ երաժշտութեան փունջ մը, որմէ ետք ԱՀԱԸ-ի Գանատայի Ներկայացուցիչ Յարութ Ներսիսեան «Երիտասարդութիւնը Վեր Բարձրացնող Անսասան Նուիրում» (Unwavering Dedication to Elevating the Youth) տեսաերիզով ներկայացուց օրուան պատուոյ հիւր՝ Վեր. Յակոբ Մանճրըքեանը՝ գնա-

Առաջնորդ Լոս Անճելըսի (Քալիֆորնիա) Միացեալ Հայ Աւետարանական Եկեղեցիին: «Որպէս երիտասարդներու առաջնորդ, ան բազմաթիւ երիտասարդներ առաջնորդած է դէպի Քրիստոս, եւ խրախուսած գնոնք ապրիլ Աստուածաշունչի ուսուցմունքներուն համաձայն՝ ընելով իրենց լաւագոյնը», ըսաւ Պր. Ներսիսեան: «Ան ոգեշնչեց յուսալքուածները, առաջնորդեց շփոթուածները, բարձրացուց ինկածները եւ յուսադրեց յուսալքուածները: Անոնք որոնք վստահուած էին իր խնամքին, զգացած էին անոր անկեղծ սէրը եւ նուիրուածութիւնը իրենց բարեկեցութեան եւ հոգեւոր աճի նկատմամբ: Վեր. Մանճրըքեանի հաւատքի վրայ հիմնուած քաջու-



Սօնա Խանճեան եւ Տօքթ. Նազարէք Տարազճեան

հատելու անոր լայնածաւալ եւ նուիրուած ծառայութիւնը, որ հարստացուցած է բազմաթիւ երիտասարդներու կեանքեր:

Վեր. Մանճրըքեան երկար տարիներ ծառայած է որպէս Քրիստոնէական Դաստիարակութեան

թիւնն ու առանձգականութիւնը ներշնչանք է բոլորիս համար»:

Ապա Պր. Ներսիսեան բեմ հրաւիրեց Վեր. Մանճրըքեանը եւ իր տիկինը՝ Գոհարը, անոնց ներ-

Շար.ը էջ 18

«Դիլիջան» Սենեկային Երաժշտութեան Համերգաշարի Տարեշրջանի Մեկնարկը



ԿԱՐԻՆԵ ՏԵՐ ԳԵՈՐԳԵԱՆ

Վերջապէս «Դիլիջան»-ի համերգը տեղի էր ունենում իրեն ծնունդ տուած օջախում՝ Լարք Երաժշտական Ընկերակցութեան համալիրում, որի նորաստեղծ թեւաշէնքի «Էօթենի եւ Գէորգ Քէշիշեան» սրահում, 27 Հոկտեմբեր 2024 թուականին ունկնդիրները ներկայ եղան այս տարեշրջանի առաջին համերգին: Տարեշրջանը ընդգրկում է 4 համերգներ:

Ծրագիրը սկսուեց «Դիլիջան» համերգաշարի հոգաբարձութեան ատենապետ Անդրանիկ Թորոսեանի ողջոյնի խօսքով: Նա շնորհակալութիւն յայտնեց այս ծրագրի հիմնադիրներ Վաչէ Պարսուճեանին եւ Մովսէս Պողոսեանին, որոնց տեսիլքով եւ համագործակցութեամբ Լոս Անճելըսի երաժշտասէր հանրութիւնը 15 տարիներ վայելում էր բարձրար-

Շար.ը էջ 19

Նոր Սերունդ Մշակութային Միութեան Վարչութիւն

Դասախօսական երեկոյ
Նուիրուած՝ **ՊԱՐՈՅՐ ՄԵՒԱԿԻ**
Ծննդեան 100 Ամեակին

Բանախօս՝
Տօքթ. Գրիգոր Սիմոնեան

Գեղարուեստական Յայտագիր
Տեղի Կ'ունենայ, Հինգշաբթի, 14 Նոյեմբեր 2024,
Երեկոյեան ժամը 7:30-ին, ՀԿԲՄ-ի կեդրոնին
1060 N Allen Ave, Pasadena, CA 91104

Massis Weekly

Volume 44, No. 42

Saturday, November 9, 2024

PM Nikol Pashinyan Congratulates Donald Trump On 'Impressive Victory' in U.S. Presidential Election



YEREVN -- Armenian Prime Minister Nikol Pashinyan has congratulated Donald Trump on his victory in the United States presidential election, describing it as "impressive."

Pashinyan's message on Wednesday followed a wave of international congratulations to the Republican candidate after he emerged as the winner of the November 5 vote.

In his congratulatory message Pashinyan expressed confidence that the Armenia-US relations will be further strengthened under his presidency.

"I am confident that your rich experience, knowledge, and abilities will best serve the well-being of the American people, the advancement of U.S. interests, and the strengthening of the U.S. global role," PM Pashinyan

wrote.

"Over the past years, relations between the Republic of Armenia and the United States of America, which are anchored in the historical friendship, common values, and mutual interests of our countries, have recorded unprecedented progress. Of course, the Armenian-American community also plays a role in this process," he added.

"I highly appreciate the effective cooperation between our countries in establishing peace and stability in the South Caucasus based on the fundamental principles of sovereignty and territorial integrity, strengthening democratic institutions in Armenia,

Continued on page 4

Armenian National Assembly Speaker Opposes Participation in Baku Climate Summit Without Return Of Detainees

YEREVAN — Armenian Parliament Speaker Alen Simonyan has stated that an Armenian delegate should not attend the UN climate change conference in Baku later this month unless Azerbaijan returns Armenian prisoners of war (POWs) and other detainees.

Simonyan made his remarks on Monday when asked by the media about Armenia's response to the invitation to the November 11-22 conference, known as COP29. Baku had officially extended the invitation to Armenia's foreign minister.

"I don't think we should hesitate to take steps when there is an opportunity to return prisoners. But we will live and see," he said.

Foreign Minister Ararat Mirzoyan indicated in parliament last week that Yerevan has not yet made a decision regarding its participation in COP29.

Some media reports suggest that Mirzoyan may consider attending the conference if Azerbaijan agrees to return Armenian detainees to Yerevan.

According to official data, 23



ethnic Armenians are currently detained in Azerbaijan. Eight of these individuals are former military and political leaders of Nagorno-Karabakh, who were arrested last fall when Azerbaijan occupied the region, leading to the exodus of more than 120,000 people – virtually the entire ethnic Armenian population of the region – to Armenia.

Armenia to Receive €270 Million in EU Assistance



YEREVAN -- Armenia will receive €270 million in assistance from the EU over 4 years, along with two grants totaling €13.8 million in 2025

"In the context of Armenia-EU relations, I would like to highlight one program: 'Resilience and Development,' which envisions €270 million in assistance. This program is planned for four years and is currently in its finalization stage," said Armenia's Deputy


Foreign Minister Paruyr Hovhannisyan.

Meanwhile, Finance Minister Vahe Hovhannisyan reported that two EU grants totaling €13.8 million are expected to be allocated to Armenia's state budget in 2025.

€4.5 million is earmarked for supporting judicial reforms, while €9.3 million is designated for education," he said.

Continued on page 2

Armenia To Host UN Biodiversity Conference In 2026



YEREVAN — Armenia will host the next United Nations biodiversity conference in 2026, according to the country's environment minister.

Hakob Simidyan said on Friday that Armenia was selected as the host for the conference, also known as COP17, with 65 votes. The other candidate was Azerbaijan, which is set to host a UN Climate Change Conference (COP29) later this month.

During his working visit to Colombia earlier this week, Armenian President Vahagn Khachaturyan addressed the 16th Conference of the Parties to the Convention on Biological Diversity in Cali, stating that holding COP17 in Armenia will be "an excellent opportunity to advance multilateral efforts to protect global biodiversity."

"Armenia will spare no effort to make sure that the CO17 will be another important milestone in our global efforts for biodiversity preservation and sustainable use of natural resources," Khachaturian said.

UNDP Country Office in Armenia has congratulated Armenia on being selected to host Biodiversity COP17 in 2026.

"Hosting COP17 offers a remarkable opportunity for Armenia to demonstrate and further advance its commitments to preserving our planet's invaluable biodiversity," UNDP said.

"We are confident that Armenia will be an exceptional host, fostering meaningful dialogue and collaboration among all participants towards this important cause," the Office added.

Srbuhi Galyan Appointed Armenia's Justice Minister

YEREVAN — President Vahagn Khachaturyan has signed a decree appointing Srbuhi Galyan as Minister of Justice.

Galyan was nominated for the post by Prime Minister Nikol Pashinyan last week. Her appointment was formally confirmed by the President.

Galyan, 32, previously served as deputy prosecutor general overseeing the coordination of functions related to illegal property confiscation. She took on this role in September 2020 after a year-long tenure as deputy minister of justice. From 2015 to 2019, Galyan worked at Armenia's Investigation Service.

Her appointment comes after the resignation of former justice minister Grigor Minasyan on October 1. Minasyan stepped down a week after more than a dozen pro-government lawmakers signed a petition



calling on PM Pashinyan to sack him.

Reports indicate that Galyan was selected from a shortlist of five candidates, which included Armenia's representative for international legal issues Yeghishe Kirakosyan and former acting chairman of the Supreme Judicial Council Gagik Jhangiryan.

Armenian Ambassador Received Threats from Azerbaijani Counterpart in Brussel

BRUSSELS — The Armenian Embassy has lodged a formal protest with other diplomatic missions in Brussels after its ambassador Tigran Balayan received death threats from his Azerbaijani counterpart.

Talking to media on Tuesday, Armenia's Deputy Foreign Minister Paruyr Hovannisian said that the threats as well as insults were made during a diplomatic reception and that the Armenian side notified both the Belgian authorities and the European Union about the incident.

"An investigation on that matter is ongoing," Hovannisian told reporters.

The incident was first reported by the American publication Politico, which cited Balayan as saying that Sadikov had threatened him during the event.

The incident reportedly took place at a reception hosted by the Turkish



Embassy at the Tangla Hotel in Brussels, marking Turkey's national holiday. Sadikov has reportedly denied the allegations, dismissing them as "ridiculous."

Armenia Participates in 7th Assembly of International Solar Alliance in New Delhi



NEW DELHI — On November 4, Armenia as a signatory and new member for the first time participated at the 7th Assembly of the International Solar Alliance (ISA), held in New Delhi, the Embassy of Armenia to India said in a statement.

On this occasion, Armenia's Ambassador to India, Vahagn Afyan, stated that by joining this international initiative, Armenia is determined to develop its solar energy sector and strengthen energy independence.

The Ambassador highlighted Armenia's priority for renewable energy. Through its 2022-2030 Energy Saving and Renewable Energy Program, Armenia aims to increase solar energy production from 5% to

15%.

Key projects include the implementation of solar installation programs and encouraging private sector involvement. Armenia is also supporting electric vehicle imports and the establishment of charging stations. By 2040, Armenia aims to achieve a 60% share of renewable energy by developing a resilient and sustainable energy system through international cooperation.

The International Solar Alliance aims to promote the development of clean and sustainable energy based on the use of solar power.

For 2025-2026, India and France have respectively taken on the roles of presidency and co-presidency of the alliance.

Armenia to Receive €270 Million

Continued from page 1

In April 2024, the President of the European Commission, Ursula von der Leyen, announced a substantial Resilience and Growth package for Armenia, to underpin the Armenia-EU Partnership Agenda.

The announcement was made after a trilateral meeting between the EU, the US, and Armenia, held in Brussels.

"We are delivering on a promise

we made last October: the promise to stand shoulder to shoulder with Armenia, and at the same time, the promise to set a vision for the future of our partnership," Von der Leyen told a press conference in April.

"We will invest in making the Armenian economy and society more robust and resistant to shocks, so that we can help them to grow, to innovate and to access new markets. And we will invest in key infrastructure projects," Von der Leyen said.

ICRC Representatives Visit Armenian POWs in Azerbaijan



YEREVAN — Representatives of the International Committee of the Red Cross (ICRC) visited in October the detained Armenians in Azerbaijan, ICRC Armenia Communications and Prevention Manager Zara Amatuni told Armenpress.

"All detained Armenians who are in Baku and whose names have been confirmed by the Azerbaijani authorities were included in the visits," Amatuni said.

The detained persons were enabled to contact their families.

Azerbaijan has acknowledged that it is holding 23 Armenian POWs. The unlawfully detained individuals include also the former Nagorno-Karabakh politicians, former presidents Arkady Ghukasyan, Bako Sahakyan, Arayik Harutyunyan, as well as former State Minister Ruben Vardanyan, Speaker of Parliament Davit Ishkhanyan, former Defense Army commander Levon Mnatsakanyan, former Foreign Minister Davit Babayan and former deputy commander of the Defense Army Davit Manukyan.

Assistance Program for Nagorno-Karabakh Refugees Extended Until March 2025

YEREVAN -- The Armenian government has extended until 2025 March an assistance program, designed for refugees from Nagorno-Karabakh, Labor and Social Affairs Minister Narek Mkrtychyan said today. The assistance amount is 50,000 drams for each refugee.

Earlier the government extended the program until the end of 2024. Forty thousand drams are provided for covering housing rent and 10,000 drams to cover utility expenses.

The minister revealed that in January-March 2025, the amount of monthly assistance will be 50,000 drams, but starting from April the

10,000 drams will not be paid. He explained that these 10,000 drams were initially provided only to those families that owned real estate.

According to the minister, starting from April of next year, social support is planned to be provided to certain groups of the refugees.

He said they are individuals with 1st and 2nd degree disability, families who have lost their breadwinners, individuals over 63 years old, children under 18 years old.

"From April to June, 40,000 drams will be provided, and from July to December inclusive, 30,000 drams," Mkrtychyan said.

AMAA 105th Annual Meeting Banquet Celebrates Youth, Pays Tribute to the Memory of Executive Director/CEO Zaven Khanjian

PARAMUS, NJ – The Armenian Missionary Association of America (AMAA), missionary arm of the Armenian Evangelical Church, held its 105th Annual Meeting Banquet on Saturday, October 19, 2024, at the Sheraton Laval Hotel in Laval, QC, Canada. Guests were warmly welcomed in Armenian, English, and French by MCs Raffi and Arpy Shnorhokian.

“Celebrating the Youth” was the theme chosen for this year’s Banquet by our late Executive Director/CEO Zaven Khanjian,” said Banquet Chair Raffi Shnorhokian in his opening remarks. “Some people may argue that celebration may not be the most appropriate way to describe tonight’s event, considering the unexpected and untimely passing of Mr. Khanjian a few months ago. However, I am convinced

leaders. Tonight, we are here to celebrate our accomplishments and thank God for everything Mr. Khanjian has done through the AMAA.”

Following the Armenian and Canadian National Anthems, Rev. Georges Dabbo, Pastor of host Church, the First Armenian Evangelical Church of Montreal, offered the Invocation.

H.E. Ms. Anahit Harutyunian, Ambassador Extraordinary and Plenipotentiary of the Republic of Armenia to Canada, who was the esteemed guest of the Banquet, greeted the audience and praised the AMAA for its service and mission to Armenians worldwide since its inception, and particularly to our brothers and sisters in the Homeland.

A special video was presented with the theme ‘Investing in Youth’

nian songs and music. Harout Nercessian, AMAA Representative in Canada, introduced honoree Rev. Hagop Manjelian to acknowledge his extensive and dedicated service that has enriched the lives of many young people with a video presentation –

mother and wife. This disability does not hold me back from an active life and service to God.”

The second half of the Program was a tribute to the memory of the late AMAA Executive Director/CEO Zaven Khanjian. “In the 10



that the best way we can honor him is by upholding his vision and continuing the journey that he faithfully led for the last 10 years. The AMAA has invested in numerous programs to support and encourage the youth, be it through scholarships, summer camps, or youth

followed by spiritual musical selections offered by Vocalist Sylvie Demirjian, Pianist Anahit Simonyan, and Violinist Eva Shahbazian.

After the guests enjoyed dinner, the musicians continued with their performance offering popular Arme-



‘Unwavering Dedication to Elevating the Youth.’

For many years, Hagop was the Christian Education Director at the United Armenian Congregational Church (UACC) in Los Angeles, CA. “As a youth leader, he led young people to Christ, motivated them to live according to the teachings of the Bible, and to excel in all they do,” said Mr. Nercessian. “He inspired the discouraged, guided the confused, picked up the fallen, and offered hope to the disheartened. Those who were entrusted to his leadership care were touched by his sincere love and commitment to their well-being and spiritual growth. Rev. Hagop’s faith-based courage and resilience is an inspiration to all of us.”

Mr. Nercessian invited Rev. Manjelian and his wife Gohar to come forward and presented him with a gift of appreciation. Rev. Manjelian thanked the AMAA for this special honor. “On June 22, 2003, I was the happiest person in the world,” said Rev. Manjelian, “when I was ordained into Christian ministry to serve the Armenian Evangelical Church of RI. However, that happiness was short-lived. Five months later, I was hit with a major stroke. All along I never complained about my ailment. On the contrary, I am grateful to God for saving my life as the answer to the prayers of my

years that Zaven and I served together at the AMAA, we took part in many celebrations and happy occasions like the 100th Anniversary Celebration of the AMAA,” said AMAA President Dr. Nazareth Darakjian. “But we also witnessed major tragedies like the Artsakh war and the subsequent forced deportations of the inhabitants. Zaven mobilized AMAA resources immediately to reach out to thousands of homeless Artsakhtsis providing them with food and shelter until they were able to find more permanent facilities. Zaven’s compassion and patriotism were without limit.”

Following a special video presentation tribute to AMAA Executive Director/CEO Zaven Khanjian (2014-2024), Dr. Darakjian invited his wife Sona Khanjian to come forward and presented her with a special gift of appreciation. Mrs. Khanjian’s remarks were touching as she mentioned how thankful she was to have had the opportunity to share her life with Zaven and for the moral support of AMAA and its President Dr. Darakjian and his wife Dr. Ani Darakjian.

The memorable evening concluded with Armenian Evangelical World Council Executive Director Rev. Dr. Vahan H. Tootikian’s closing prayer and Benediction.

By LOUISA JANBAZIAN, AMAA Public Relations Coordinator

Statue of Renowned Armenian Actor Yervand Manaryan Unveiled in Yerevan



YEREVAN — Today, a statue honoring People’s Artist of Armenia, actor, and director Yervand Manaryan was unveiled in Yerevan, commemorating his lasting legacy in Armenian cinema and theater. The ceremony was attended by high-ranking offi-

cial, including Prime Minister Nikol Pashinyan, Chief of Staff Arayik Harutyunyan, Yerevan Mayor Tigran Avinyan, and Minister of Education, Science, Culture, and Sports Zhanna Andreasyan, along with prominent figures from the cultural community.

The 2.8-meter statue, unveiled by Zhanna Andreasyan and Manaryan’s son, Krist Manaryan, stands near 4 Sayat-Nova Avenue, in front of the Hovhannes Tumanyan National Puppet Theater. This significant monument, erected in celebration of the artist’s 100th birth anniversary, reflects his enduring impact on Armenian culture.

Ruben Babayan, inspired by a memorable scene from the film *The Bride from the North*, envisioned the statue as “living” and dynamic, capturing Manaryan’s spirited personality. The bronze statue, crafted by artist Armenak Vardanyan, required eight

months to complete and portrays Manaryan riding a motorcycle, a nod to the film and his indomitable character.

The celebration continued with the release of a commemorative stamp dedicated to Manaryan’s centennial. Issued with a face value of 380 drams, the stamp features a portrait of the actor and the inscriptions “100 YEARS,” “YERVAND MANARYAN,” and “Armenian actor, director” in both Armenian and English. The event also included a photo exhibition, further honoring Manaryan’s remarkable contributions to Armenian arts and culture.

Dr. Hratch Tchilingirian: To Be Armenian Living in the Diaspora in the 21st Century



BURBANK — Under the auspices of His Eminence Archbishop Hovnan Derderian, an unprecedented event was organized by the Zvartnots Cultural Committee of the Western Diocese of the Armenian Church.

On October 24, 2024, Dr. Hratch Tchilingirian, the newly-appointed Director of the Institutional Innovation Project of the Western Diocese, unveiled his massive initiative. It was based on the outcome of his extensive global research for the purpose of exploring the “Armenian Identity in the Diaspora,” with the affiliation of the Gulbenkian Foundation.

During welcoming and opening remarks, Dr. Simon Simonian, Chairman of the Committee, gave a brief overview of the word “Diaspora.” He introduced the lecturer, Dr.

Hratch Tchilingirian, as an academic leader, an experienced professor from the Universities of Oxford and Cambridge in the UK, as well as an Associate Professor of Armenian studies at Inalco in Paris, France.

Dr. Simonian also introduced the two talented cultural participants who set the stage by enhancing the evening: Mrs. Armine Ghazaryan, a renowned pianist, who performed two works by Armenian composers; and Mrs. Ani Marselian, a teacher at the Diocese Hovsepian School, who recited a heartwarming Armenian poem.

In Dr. Tchilingirian’s quest to discover, “What are the ingredients of the Armenian Identity in the Diaspora today?”, a global survey was conducted. Specifically, 13,000 Armenians of all ages participated; and there were an additional 400 personal interviews conducted of Armenians from 10 different countries. According to Dr. Tchilingirian, the outcome of the study revealed that, “‘Diaspora’, has a much more complicated connotation for Armenians in light of the devastating genocide.” “There is no commonality in understanding. Each Armenian defines his/her own identity.” As for his observations regarding the new generation, he stated, “It is incon-

ceivable to mold our traditional ‘Armenianness’ to our new generation.” “Homeland is not the same for all Armenians.” He acknowledged concern, however he did not consider the results to be alarming. “We cannot focus on what we are losing, but build on what we have.”

A healthy question/answer discussion by some very accomplished local educators in the audience, fol-




lowed the lecture. The prevalent subject was about “the mission/role of our devoted Armenian educators.” There were recommendations to organize follow-up lectures in order to cover such a vast subject.

Archbishop Derderian, in his final closing remarks, prior to his benediction, expressed his deep appreciation to the Zvartnots Committee, the cultural performers and the new collaborator of the Western Diocese; the renowned Professor Tchilingirian. The Archbishop added the immense need to adapt and overcome the challenges of change and viewed stagnation as extremely detrimental at the present threshold. He emphasized the need for optimism and inclusion of our youth in every aspect of growth, stating: “This research can only be justified if we implement and benefit from Dr. Tchilingirian’s tireless exploration.”

The evening came to a close with an appropriate reception prepared by the Zvartnots Cultural Committee.

New Publication “Khatchkars: Emblematic Art of Armenia” by Hrair Hawk Khatcherian



FRESNO — Photographer Hrair Hawk Khatcherian will speak on “Khatchkars: Emblematic Art of Armenia” at 7:00PM on Thursday, November 14, 2024, in the University Business Center (5245 N. Backer Ave.), Alice Peters Auditorium, on the Fresno State campus. A reception, from 6:00-7:00pm, will precede the talk, with the Andrew Hagopian Trio performing during the reception. Khatcherian’s presentation is part of the Grace and Paul Shahinian Armenian Christian Art Series and is co-sponsored by the AGBU Greater Fresno Chapter.

Among the creations of Armenian artistic genius, which gives this nation an important place in art’s universal history, the khatchkar (khatch=cross; kar=stone) is probably the most iconic example of this in Armenia. Khatcherian will present his new book, *Khatchkar: Art and Soul—An Armenian Visual Journey* and will link the khatchkar to images in Armenian manuscript painting. Khatcherian’s new book will be on sale at the lecture.

Hrair Hawk Khatcherian was born in Lebanon in 1961. In 1982 he earned his wings as a commercial pilot in Hayward, California. He moved to Canada in 1984, working as a freelance

photojournalist in Toronto. In 1988, he actively participated in various activities of the Armenian Diaspora related to the Artsakh (Karabakh) Movement. For almost three decades now, Hawk has been presenting exhibitions, conferences, photographic lectures all around the globe, making Artsakh, Armenia and Western Armenia an accessible reality for all. His photographs have appeared in numerous magazines, newspapers, books and publications. He has reached the top of the biblical mountain Ararat, the sacred symbol of Armenians, and in that mythical place he has solemnly renewed his commitment and his oath, to pursue his work relentlessly.

The reception and lecture are free and open to the public. Parking is available in Fresno State Lot P6, near the University Business Center. Permits are required for Thursday night lectures and free permits will be available at the venue.

The presentation will also be live-streamed on YouTube at: <https://bit.ly/armenianstudiesyoutube>.

For information about upcoming Armenian Studies Program presentations, please follow us on our Facebook page, @ArmenianStudiesFresnoState or at the Program website, <https://fresnostate.edu/armenianstudies>.

PM Nikol Pashinyan Congratulates

Continued from page 1

protecting human rights and ensuring the rule of law, combating corruption, and preventing security threats,” PM Pashinyan said.

He emphasized the development of bilateral cooperation in the trade, economic, and investment sectors, as well as the full utilization of the untapped potential. “In this regard, I am pleased to note the joint efforts aimed at promoting Armenia’s economic and energy resilience. I am confident that during your presidency, Armenia-US relations will be further strengthened, and we will continue to record new achievements, realizing our vision of reaching the level of strategic partnership,” the Armenian Pm noted.

“I am hopeful that new opportunities will be created in relations between the Republic of Armenia and the United States of America, especially in the areas of establishment of lasting and stable peace in the South Caucasus, regional economic ties and communication in the event of unblocking the routes,” PM Pashinyan said, adding that Armenia’s proposals in this regard are summarized in the “Crossroads of Peace” project.

“Allow me to once again congratulate you on your election as President of the United States, wishing you good health, success, and new achievements for the benefit of the welfare and progress of the friendly people of the United States of America,” the Prime Minister concluded.

www.massispost.com

Ձեր ծանուցումները Կատարեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

Սրտի Խօսք՝ Սէմ Սիմոնեանի Հ.Բ.Ը.Միութեան Նախագահութիւնը Ստանձնելուն Առիթով

ՓԱՆՈՍ ԹԻԹԻԶԵԱՆ

12 Հոկտեմբեր 2024-ին, Նիւ Եորքի մէջ կայացած 93-րդ Ընդհանուր ժողովին, Հ.Բ.Ը.Միութեան նախագահական ջանքերը Սեդրակեանէն փոխանցուեցաւ Սէմ Սիմոնեանին: Շատ պիտի փափաքէի անձամբ ներկայ ըլլալ փոխանցման արարողութեանց սակայն յառաջացած տարիքս չարտօնեց ինծի նման քայլ մը առնելու: Ես փորձեցի կարելի չափով մօտէն հետեւիլ անկիւնադարձային այդ պահուն: Այժմ աչքիս առջեւ ունիմ Պերճ Սեդրակեանի հրաժեշտի ելոյթը, ինչպէս նաեւ Սէմ Սիմոնեանի պաշտօնի ստանձնումի խօսքը: Միութեան 7-րդ Նախագահ Պերճ Սեդրակեանի 22 տարուան նախագահութեան շրջանը, (առաւել Միութեան վերին ղեկավարութեան մէջ իր դերակատարութեան աւելի քան 45 տարիները), յատկանշուեցաւ մեր ժողովուրդի եւ ընդհանրապէս աշխարհի պատմութեան ամենաբարձր եւ աննախադէպ գարգացումներով եւ յաճախ աղիտալի հետեւանքներով, որոնց դէմ յանդիման Միութիւնը հաւատարիմ իր առաքելութեան, գործեց անխոնջ, քայլ պահեց սրբնական փոխուող ժամանակներուն հետ, արդիւնաւորութեամբ յառաջ տարաւ իր ազգանուէր ծառայութիւնը, մնալով միասնականութեան օրինակ եւ խորհրդանիշ, որպէս հայ ժողովուրդին եւ լայն շրջանակներու համակրանքը եւ վստահութիւնը վայելող կազմակերպութիւն: Այժմ այդ շրջանը կ'անցնի պատմութեան դատաստանին եւ նոր էջ մը կը բացուի Միութեան կեանքէն ներս, Սէմ Սիմոնեանի որպէս Միութեան 8-րդ նախագահ պաշտօնի ստանձնումով: Փ.Թ.

Ամէն բանէ առաջ, մեր ժողովուրդին եւ հայրենիքին ներկայ օրհասական լինելու չլինելու անորոշ անկիւնադարձին, կը փափաքեմ ղեկավարութիւն հասկացողութեան մասին ընդհանրացումի ձեւին տակ կարգ մը միտքեր յայտնել:

Վահան Թէքէեան հայոց Յեղասպանութեան անմիջապէս յաջորդող շրջանին իր մէկ բանաստեղծութեան մէջ հետեւեալ միտքը կը պարզէ. «Կարենալ ապրելու համար այսուհետեւ մենք պէտք ունինք հպարտութեան»: Իսկ մենք այս պահուն կարենալ ապրելու համար ամէն բանէ առաջ պէտք ունինք ղեկավարութեան: Այս խօսքը որքան ճիշդ է հայրենիքին համար, նոյնքան եւ աւելի ճիշդ է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան համար:

Սէմ Սիմոնեանին գործածած բառերով՝ "As we honor our past achievements and progress, it is essential not to be wedded to and cling to outdated methods© This is the age of the internet, technology, and artificial intelligence, and our approach to educating and engaging the youth must evolve to make the most of these transformational advances©" (Մինչ մենք կը գնահատենք մեր անցեալի ձեռքբերումները եւ յառաջդիմութիւնները, անհարժեշտ է չփարիլ կամ կառչած չմնալ ժամանակավրէպ գործելակերպերու: Ասիկա համացանցի, ճարտարագիտութեան եւ արուեստական բանականութեան դարն է: Երիտասարդութիւնը դաստիարա-



կելու եւ գործի մղելու մեր մօտեցումները պէտք է մշակուին եւ առաւելագոյնս օգտուին փոխակերպող այս յառաջդիմութիւններէն:)

Խոսացած ճշմարտութիւնը եւ պահուն պահանջը, ըսուած յտակ, պարզ, գործնական եւ հեռուն նայող տրամաբանութեամբ: Խօսքը ղեկավարութեան մասին է: «Հասկանալ պահանջ»՝ ամէն ինչ է ղեկավարութեան համար: Ղեկավարու-

թիւնը յարաբերութիւն եւ միաժամանակ պարագայական երեւոյթ է: ("leadership is both relationship and situational phenomenon") Յարաբերութիւն, որովհետեւ հետեւորդները կը փափաքին տեսնել ղեկավարներ, որոնք խորապէս կ'ըմբռնեն իրենց տեսչերն ու կարիքները, ինչպէս նաեւ մարտահրաւէրներն ու ստեղծուած առիթները: Իսկ պարագայականութիւնը կը վերաբերի պահի ճիշդ ըմբռնումին: Այս է ղեկավարութեան ամբողջական հասկացողութիւնը: Եւ վերջին հաշուով, ղեկավարութիւնը արդիւնք տալն է:

Ո՞վ է Հ.Բ.Ը.Միութեան նորընտիր նախագահ Սէմ Սիմոնեանը: Ան իր ստեղծած ճարտարագիտական (Technology) կրթութեան ճիւղաւորուած համակարգով, յաջս նոր սերունդներուն փաստած է թէ ինք, ինչպէս նաեւ իր եզակիօրէն համեստ տիկինը Սիլվիան, սերտօրէն առնչուած են երիտասարդութեան: Այժմ ժամանակն է իրեն գործակից ղեկավարութեան հետ միատեղ, Միութիւնը առաջնորդելու դէպի նոր ապագայ:

Ինչու՞ Սէմ Սիմոնեան ներշնչող դէմք մըն է: Իր համեստ ծագումը, այն, որ ինք ծնունդ առած է Լիբանանի Պուրճ Համու-

տի հայաշատ միջավայրին ծոցէն, իր փայլուն միտքը, ճարտարագիտական պատրաստութիւնը, գինք դարձուցեր են ստեղծագործ: Իր հայրն ու ինք եւ իր տիկինը, իրենց ազգային կրթութիւնը ստացեր են Հ.Բ.Ը.Մ.ի վարժարաններէն ու հասակ առեր Պօղոս Նուպարներու ներշնչող ոգիով: Պողպատեայ կամքով ու հաւատքով ծառայելու համար ժողովուրդի մը որ կ'ուզէ ապրիլ, գոյատեւել եւ ստեղծագործել: Այս բոլորին պէտք է միացնել Սիլվիային ոսկեղէն սիրտը, պարզութիւնը, ներշնչող հմայքը, մղիչ ուժը, ծառայելու համար ազգին ու հայրենիքին:

Սէմ Սիմոնեանի ելոյթին մէջ կը կարդանք հետեւեալ իմաստուն խօսքերը:

"Our focus remains on ensuring prosperity in Armenia and preserving our identity in the Diaspora, without aligning with or endorsing any political party or agenda©" (Մեր մտասեւեռումը կը մնայ բարօրութիւն ապահովել Հայաստանի մէջ եւ պահպանել մեր դիմագիծը Սփիւռքի մէջ, առանց յարելու որեւէ քաղաքական կուսակցութեան հետապնդած նպատակներուն:)

Շար.ը էջ 19

Օշից Բէշիշեանի 90ամեակը



ԴՈՎՏ. ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ

Մեծ շուքով պիտի նշուի մեծ մտաւորական Փրոֆ. Օշին Բէշիշեանի ծննդեան 90ամեակը: Թուեմ անոր լաւագոյնս յարմարող քանի մը յատկանիշները՝ հմուտ եւ անկախ լրագրող, խմբագիր, հայերէնի եւ անգլերէնի հմուտ գիտակ, երկարամեայ դասախօս, նուիրեալ ԹՄՄ-ական, գուարթամիտ եւ անկախ մտաւորական, ԱՄՆ բանակային, Խորհրդային եւ անկախութեան շրջաններու Հայաստանի անսակարկ նուիրեալ, Սարոյեանագէտ, ԱՄՆ Արեւմտեան Ափի հայկական հեռաստեւիլի ռահվիրայ, Պէյրութի ՀԲԸՄ-ի Յովակիմեան-Մանուկեան վարժարանի առաջին փայլուն շրջանաւարտներէն մին...

Յառաջիկայ Նոյեմբեր 10-ին Արեւմտեան ԱՄՆ-ի առաջնորդարանը Սրբոց Ղեկնողեանց տաճարին մէջ յաւաքով պատշաճի պիտի տօնախմբուի իր տասնամեակներու վրայ երկարող վաստակը՝ հովանաւորութեամբ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի:

Պէտք է սկսիմ Օշինին կիլիկեան ծագումէն: Նախնիները կիլիկիոյ առաջին մայրաքաղաք Գերմանիկ-Մարաշին են: Յեղասպանութեան հետեւանքով ծնողները կը հաստատուին Երուսաղէմ, ուր կը ստանայ իր նախնական կրթութիւնը, ապա, հազարաւորներու նման իզրայէլեան ուժերու եւ պաղեստինցիներու միջեւ տեղի ունեցած արիւնալի բախումներէ ետք իր ընտանիքը կ'ապաստանի Լիբանան: Աւարտելէ ետք ՀԲԸՄ-ի մանչերու երկրորդական վարժարանը ատեն մը կը վարէ «Զարթոնք» պաշտօնաթերթի մեծ ժողովրդականութիւն վայելող «Մարդական Քաժինը», յաճախած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանը, ապա ԱՄՆ փոխադրուելէ ետք կը յաճախէ Գալիֆորնիոյ Նահանգային, աւելի ուշ՝ Լա Վերնի համալսարանները: Մեծ եղբայրը՝ Օննիկ Բէշիշեան եղած է երկարամեայ ուսուցիչ, տնօրէն եւ կրթական գործիչ, քոյրը՝ Անգինէ Բէշիշեան եղած է յայտնի մեներգչուհի Արեւմտեան Ափի տարածքին, պէտք է յիշեցնեմ նաեւ թէ Օշին կարճատեւ շրջան մը ծառայած է ԱՄՆ-ի բանակին մէջ...

Եզակի երեւոյթ է Օշին Բէշիշեան խմբագիրը եւ մամուլի մարդը: Տակաւին երկրորդական վարժարանի վերջին տարիներուն ան խմբագրած է ՀԲԸՄ-ի Յովակիմեան-Մանուկեան վարժարանի «Նուիրում» աշակերտական թերթը, որուն էջերուն մէջ իրենց առաջին գրական փորձերը կատարեցին 50-60-ականներու լրագրողներ, յօդուածագիրներ եւ երիտասարդ ուսանող-գրագէտներ: Կուսակցական չըլլալով ան հրաւիրուեցաւ ստանձնելու ՌԱԿ Արեւմտեան ԱՄՆ-ի Շրջանի «Նոր Օր»-ի խմբագրի պաշտօնը (1968 - 1970 թթ.), զոր ան կատարեց մեծ բժախնդրութեամբ՝ վաստակաշատ մտաւորական եւ խմբագիր Անդրանիկ Անդրէասեանէն ետք: Որպէս խմբագիր Օ. Բէշիշեան բերաւ իր նորութիւնն ու շունչը՝ եռօտեայ թերթին տալով զանազանութիւն, մարզական ճոխ բաժին եւ տեղական նորութիւններ: Աւելի զգալի դարձան ամերիկեան եւ միջազգային քաղաքական բնօրինակ վերլուծական յօդուածներու ներկայութիւնը: Ան բժախնդիր էր նաեւ թերթին ներկայացման ձեւին մէջ, օրինակ երկարաշունչ յօդուածները պէտք է բաժնուէին ենթագլուխներու եւ նկարները պէտք է ունենային կարճ տեղեկութիւններ:

Օշին Բէշիշեան անգլիատառ The Armenian Observer շաբաթաթերթի հիմնադիրն է: Այս թերթին սիւնակներուն ընդմէջէն անգլիախօս հին ու նոր սերունդը հաղորդակից դարձաւ հայ սփիւռքի եւ հայրենի անցուղարձերուն: Այս իսկ պատճառով զինք կարելի է նկատել յետ 2-րդ պատերազմեան շրջանի ամերիկահայութեան նահապետներէն մէկը:

Մեր յոբելեարը լուրջ աշխատանք տարաւ նաեւ Քալիֆորնիայի Մոնթեպելլօ քաղաքի Յեղասպանութեան յանձնախումբէն ներս՝ նաւարկելով քաղաքական վտանգաւոր խութերու մէջէն, մինչեւ որ յանձնախումբը յաջողեցաւ կանգնեցնել Յեղասպանութեան յուշակոթողը ...

90-ամեայ բայց տակաւին սրտով ու հոգիով երիտասարդ Օ. Բէշիշեան կլէնտէյլ քաղաքի նահանգային գոլէճին ամէնէն սիրուած դասախօսներէն մէկը եղաւ՝ յատկապէս մեծ թիւ կազմող հայ ուսանողութեան շրջանակէն ներս՝ քաջալերելով զանոնք որ ձգտին աւելի բարձրին:

Խօսիլ կամ գրել Օշին Բէշիշեանին մասին եւ մոռնալ Ուիլիըմ Սարոյեանը շատ թերի պիտի դարձնէր այս կարճ անդրադարձը: Հոգեկան կապ մը եղած է «մեծ պիթիսցի-Ֆրեզնոցի» ին եւ մարաշի-երուսաղէմցի Օշինին միջեւ: Մինչեւ օրս յիշողութեանս մէջ թարմ կը մնայ Սարոյեանի աճիւններու մէկ երրորդին փոխադրութիւնը Խորհրդային Հայաստան: Այդ փոխադրութիւնը յանձն առաւ Օշին՝ կատարելով Մեծ գրողին փափաքը: Պարզ յուղարկաւորութիւն մը էր Երեւանի մէջ տեղի ունեցածը, այլ՝ բարիվերադարձի իւրօրինակ տօնախմբութիւն մը մեր հայրենիքէն ներս:

Նորանկախ Հայաստանի մէջ Փրոֆ. Օ. Բէշիշեան բերաւ կարե-

ւոր օժանդակութիւններ եւս, որոնք արժանի են յիշատակութեան: Այսպէս, Խաչատուր Աբովեանի անուան Հայկական Մանկավարժական Համալսարանին բանասիրական բաժինը օժտուեցաւ սփիւռքահայ գրականութեան՝ երկու կիսամեակ ընթացող դասընթացի (126 ժամ) ծրագրով: Այնուհետեւ, 2006 թուականին, Օ. Բէշիշեան արժանացաւ «Սփիւռք» Գիտա-ուսումնական կեդրոնի Պատուոյ գիրին՝ ուսանողութեան շրջանին հայ գրականութեան նորագոյն պատմութիւնը արժանապատիւ ներկայացնելու, անոնց յառաջդիմութիւնը մշտապէս խրախուսելու, գիտական նստաշրջաններուն կարգացած բարձրորակ գեղուցումներուն համար:

Վստահաբար տակաւին շատեր գրաւոր եւ բանաւոր խօսքով ելոյթներ պիտի ունենան ՄԵՐ ՕՇԻՆԻՆ յոբելեանին առթիւ: Տողերուս հեղինակին եւ ինչու էլ նաեւ իր շատ մը բարեկամներուն ու գործակիցներուն փափաքն է որ շուտափոյթ կերպով կազմուի յատուկ յանձնախումբ մը, որ հատորի մը մէջ ամփոփէ իր խմբագրականներն ու յօդուածները, որովհետեւ անոնք կ'արտացոլեն ամերիկահայութեան անցած ուղին, տուայտանքները, մշակութային ու քաղաքական անցուղարձերը:

Դէպի նոր սկիզբ, սիրելի Օշին: Կը տեսնուինք Նոյեմբեր 10-ին Սրբոց Ղեկնողեանց տաճարի կամարներուն տակ:

PASADENA Armenian Festival

FOOD ■ MUSIC ■ SHOP

Victory Park
2575 Paloma St.
Pasadena, CA 91107

Saturday
Nov. 16, 2024
10am-5pm

Performance by
ELEMENT BAND
INSTRUMENTAL QUARTET

pasadenaarmenianfestival@gmail.com ■ @pasadenaarmenianfestival
www.pasadenaarmenianfestival.com

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ԵՌԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680

Հ.Բ.Ը.Մ.Ի 93-րդ Ընդհանուր ժողովը Միասնութեան, Գնահատանքի Եւ Փոխանցումի Ձերմ Տրամադրութիւններով Յատկանշուեցաւ



Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 93-րդ Ընդհանուր ժողովը, որ Նիւ Եորքի մէջ կը համախմբէր 22 երկիրներէ ժամանած 875-է աւելի անդամներ, բարեկամներ եւ հիւրեր, իր յայտագիրներու որակով, ընդհանուր փայլով, ստեղծած խանդավառութեամբ եւ յուզականութեամբ, սպաւորիչ եւ յիշատակելի իրագործում մը հանդիսացաւ:

10-12 Հոկտեմբերի շաբաթավերջը, Նիւ Եորք քաղաքի ընտրանի հաւաքավայրէ ներս իրականացած ընկերային, աշխատանքային, մշակութային եւ ծրագրային ձեռնարկներով եւ յայտագիրներով, բարեկամութիւններու սերտացման, միտքերու փոխանակման, անցեալ իրագործումներու գնահատման, ապագայի ուղեգծման, եւ արուեստի նրբաձաշակ եւ նորարար կատարողական ելոյթներու ըմբռնչումի աննախընթաց առիթներ ընձեռեց մասնակիցներուն:

Այս Ընդհանուր ժողովի ամենախառնակալան իրադարձութիւնը անշուշտ, Միութեան նախագահութիւնը անոր եօթերորդ Նախագահ Պերճ Սեդրակեանէն, ութերորդ Նախագահ Սէմ Սիմոնեանին փոխանցումն էր:

Ղեկավարութեան Փոխանցում

Նախագահութեան պաշտօնի փոխանցումը պաշտօնապէս տեղի ունեցաւ Միութեան 93-րդ Ընդհանուր ժողովի ընթացքին, որ կայացաւ Նիւ Եորքի Մէնսթրին Օրիէնթըլ պանդոկի քաղաքահայեաց բարձրանիստ սրահին մէջ, մասնակցութեամբ աշխարհի տարբեր կողմերէն 360 պատուիրակներու: Ներկայ էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը: Ներկայ էին նաեւ շարք մը պաշտօնական հիւրեր:

Նախագահ Պերճ Սեդրակեանի Ընդհանուր ժողովին ուղղուած ելոյթը կ'անդրադառնար ներկայ իրադրութեան վերաբերեալ բազմաթիւ նիւթերու:

«Հայ ազգը ներկայիս խաչմերուկի մը առջեւ կը գտնուի:» Ըսաւ Նախագահ Պերճ Սեդրակեան «Ան գրեթէ հաւասարապէս բաժնուած է Հայրենիքի, Ռուսական եւ Արեւմտեան սփիւռքներու միջեւ: Անոնցմէ իւրաքանչիւրը ունի ազգային ինքնութեան իր յատուկ արտայայտութիւնը: Ասիկա մեզ իրարմէ կը տարբերէ բայց եւ կը նոյնացնէ: Մենք պէտք է զօրացնենք կամուրջները որպէսզի պահենք համընդհանուր ազգը: Ոչ

պետութիւնը եւ ոչ ալ Սփիւռքը կրնան առանձինն ընել այդ: Հ.Բ.Ը.Մ.Ի ղեկավարութեան մէջ իմ գործօն ներկայութեանս ամբողջ տեւողութեան, մենք փորձած ենք կամրջել այդ բացը մեր համաշխարհային ցանցին միջոցաւ: Ես կը խորհիմ որ մեր կազմակերպութիւնը փայլուն օրինակն է այն իրողութեան, թէ հակառակ մեր մշակութային երանգներուն եւ ազգային տարբեր փորձառութիւններուն, միութիւնը տիրական է:»

Ան աւելցուց, թէ Հայ Եկեղեցին կենսական դեր կը կատարէ տարբեր կազմաւորումով եւ բնոյթով յատկանշուող հայերը իրարու միացնելու՝ տիեզերական եւ անժամանցելի հայրօժէքներով, աւանդութիւններով եւ սովորութիւններով, որոնք կը բխին Հայ Առաքելական Եկեղեցւոյ քրիստոնէական ըմբռնումներէն, պատմութենէն եւ մշակութային ժառանգութենէն:

Ընդհանուր ժողովի պաշտօնական նիստի ընթացքին, Կեդրոնական ժողովի Փոխ-Նախագահ Ժոզէֆ Ուղուրլեան յայտարարեց, թէ Հ.Բ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչական Ժողովը եւ Հոգաբարձուներու Խորհուրդը միաձայնութեամբ որոշում կայացուցած էին Պերճ Սեդրակեանը ընտրել Միութեան Պատուոյ Նախագահ, նկատի ունենալով անոր կէս դարու վաստակը Միութեան ղեկավար մարմնին մէջ եւ իր խոր դրոշմը կազմակերպութեան վրայ: Ընդհանուր ժողովը խանդավառ ծափահարութիւններով ողջունեց այդ որոշումը:

Պաշտօնի ստանցման իր ելոյթին մէջ նորընտիր Նախագահ Սէմ Սիմոնեան շեշտելով միասնակալութեան գաղափարը՝ ոչ-հատուածական հասկացողութեամբ, ըսաւ՝ «Մենք կը յարգենք ազգային մեր բոլոր կառուցները, ըլլան անոնք կրօնական, մշակութային թէ կրթական: Անկողմնակալութեան մեր յարումը կ'օգնէ, որ մենք ծառայենք հայութեան բոլոր շրջանակներուն անխտիր, զանոնք համախմբելով մեր հասարակաց արժէքներուն եւ նպատակներուն շուրջ, զերծ բաժանարար ազդեցութիւններէ, որոնք կրնան յառաջ գալ քաղաքական պատկանելութիւններու պատճառով:» Ան յատկապէս շեշտեց թէ՛ «Մինչ մենք կը գնահատենք մեր անցեալի ձեռքբերումները եւ յառաջդիմութիւնները, անհարաժեշտ է չփարիլ կամ կառչած չմնալ ժամանակավրէպ գործելակերպերու: Ասիկա համացանցի, ճարտարագիտութեան եւ արուեստական բանականութեան դարն է: Երիտասարդութիւնը

դաստիարակելու եւ գործի մղելու մեր մօտեցումները պէտք է մշակուին եւ առաւելագոյնս օգտուին փոխակերպող այս յառաջընթացներէն:»

Անդրադառնալով մեր դիմագրաւած մարտահրաւէրներուն որոնց դէմ անհրաժեշտ է միաւորել մեր ուժերը, Նորընտիր Նախագահը ըսաւ՝ «Այս դժուարութիւնները յաղթահարելու համար, մենք միասնական ապագայի տեսիլք եւ ձգտումներ պէտք է հետապնդենք: Այսպիսի տեսլականներու իրագործումը, կը պահանջէ որ մեր կազմակերպութիւնները ներդաշնակօրէն եւ միասնաբար գործեն, համադրելով իրենց միջոցները եւ հմտութիւնները, փոխանակ մրցակցելու իրարու դէմ: Երբ կը համագործակցինք, մենք կը բացենք մեր համընդհանուր համայնքը, կը բազմապատկենք մեր ազդեցութիւնը եւ ամենուրէք կ'ապահովենք հայութեան մնայուն յաջողութիւնը եւ դիմագրակալութիւնը:»



Հ.Բ.Ը.Մ.Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՐԵԱԼՆԵՐ

Ընդհանուր ժողովի աւանդութեան մաս կը կազմէ անցնող երկու տարիներու գծունէութիւններու արժեւորումի ծիրէն ներս, ճանաչումի արժանացնել եւ մեծարել Միութեան այն անդամները կամ պաշտօնեաները, որոնք նուիրումով եւ գերազանց գործունէութեամբ՝ ուշադրութեան արժանացած են:

Հ.Բ.Ը.Մ.Ի Գերազանց Ծառայութեան Մրցանակը յանձնուեցաւ Հ.Բ.Ը.Մ.Ի Լոնտոնի մասնաճիւղին եւ Երիտասարդ Արհեստավարժներու խմբակցութեան իրենց կառուցողական ճիգերուն եւ համագործակցութեան ոգիին համար: Նուիրեալ ծառայութեան համար Նախագահի Մրցանակով Գնահատանքի արժանացան Հ.Բ.Ը.Մ.Ի Կեդրոնական Գրասենեակի պաշտօնատարներ Բանտա Աքտա՝ Կտակներու եւ Հիմնադրամներու բաժնի տնօրէն եւ Հրանդ Քամալեան՝ հաղորդակցական ճարտարագիտական բաժնի տնօրէն: Մեծարուեցան նաեւ Միջիկընի Ալէքս եւ Մարի Մանուկեան Վարժարանի նախկին տնօրէն Յովսէփ Թորոսեան եւ խոհարարապետ Ալին Քամաքեան, որ ներկայ չէր, Լիբանանի մէջ շղթա յագեցրած պատերազմի տեղահանեալներու Ուժըրլա Սենդրալ Քիչընի օգնութեան աշխատանքներուն օժանդակելու իր պատասխանատուութեան պատճառով:

Հ.Բ.Ը.Մ.Ի Ալէքս Մանուկեան

մրցանակով գնահատուեցաւ Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եւ Արմէն Օնթարիօ յանձնախումբի երկար տարիներու ատենապետ իրաւաբան Պերճ Փափագեան: Մեծարուեցան նաեւ Խաղաղութեան Նոպէլեան մրցանակի երկակի թեկնածու Կարօ Փայլան եւ Ամերիկեան Քոնկրէսական եւ Հայաստան խմբակցութեան երկար տարիներու ղեկավար Ֆրէնք Փալօն, հայ համայնքին եւ հայութեան իրենց ծառայութեան համար՝ արժանանալով Պօղոս Նուպար մրցանակին:

ՊԱՏՈՒՅՑ ԸՆԹՐԻՔ ԱՌ Ի ԳՆԱՀԱՏԱՆՔ ՎԵՐԱ ԵՒ ՊԵՐՃ ՍԵԴՐԱԿԵԱՆՆԵՐՈՒՆ

Նոյն օրը երեկոյեան, Նիւ Եորքի Կաթըմ Հոլլ շքեղ սրահէն ներս 550 հիւրերու մասնակցութեամբ, բարեկամներու, գործակիցներու, հանրային, մասնագիտական մարզերու պատասխանատուներու եւ մտերիմներու կողմէ գնահատանքի, երախտագիտու-

թեան, մեծարանքի եւ յուշ-վկայութիւններու ջերմ միջոցառումով յագեցած հանդիսաւոր ընթրիքի մը ընթացքին, արժանաւորապէս պատուուեցան Տէր եւ Տիկին Պերճ եւ Վերա Սեդրակեանները: Երեկոյի գեղարուեստական բաժնին աշխույժ կատարումով իր մասնակցութիւնը բերաւ համաշխարհային ճանաչումի արժանացած արուեստագէտ՝ Չութակահար Սամուէլ Երվինեան:

Երեկոյթի Հանդիսավարը՝ Յիւրի Վ.Բ.Ը.Մ.Ի Երիտասարդ Արհեստավարժներու խմբակցութեան համահիմնադիր էլիզապէթ Իսթամպուլի վոն Շարնըր, շնորհակալութիւն յայտնեց Պերճ եւ Վերա Սեդրակեաններուն հայ երիտասարդութեան նկատմամբ իրենց վստահութեան եւ տեսլականին համար: Այդ յանձնառութեան շնորհիւ, Երիտասարդ Արհեստավարժներու շարժումը, որ 2002-ին միայն 4 խմբակցութիւններ ունէր, այժմ ծաւալած է հասնելով 46 խմբակցութիւններու:

Պերճ Սեդրակեան Առաջնորդական Հիմնադրամ

Պերճ Սեդրակեանի կէս դարու գերազանց առաջնորդութեան որպէս պատէհ տուրք՝ Նախագահ Սէմ Սիմոնեան յայտարարեց Պերճ Սեդրակեան Առաջնորդական Հիմնադրամի մեկնարկը: «Պերճ Սեդրակեանի հետ երկար տարիներու իմ գործակցութեանս ընթացքին, ան

Հ.Բ.Ը.Մ.Ի 93-րդ Ընդհանուր Ժողովը Միասնութեան, Գնահատանքի Եւ Փոխանցումի Ձերմ Տրամադրութիւններով Յատկանշուեցաւ

Շարունակուած էջ 15-էն

շարունակաբար շեշտած է երիտասարդ առաջնորդներ պատրաստելու անհրաժեշտութիւնը: Անհատներ, որոնք յաջողած ըլլան իրենց համապատասխան ասպարէզներուն մէջ եւ ունենան տաղանդը եւ գիտութիւնը յաջողութեամբ նաւարկելու արագ զարգացող աշխարհի մը բարդ իրադարձութիւններուն ընդմէջէն, խորապէս առնչուած ըլլալով իրենց հայ ինքնութեան եւ համայնքին» ըսաւ ան:

Սէմ Սիմոնեան նշեց, թէ հիմնադրամին աջակցողներու խումբ մը, որոնք աշխարհի տարբեր կողմերէն փութացած էին բերելու իրենց մասնակցութիւնը, արդէն իսկ գոյացուցած էին 3.3 միլիոն ամերիկեան տոլարի գումար մը որպէս սկիզբ:

Մեծարեալը՝ Պատուոյ Նախագահ Պերճ Սեդրակեան, որ յայտնապէս յուզուած էր իրեն հանդէպ դրսեւորուած սիրոյ, համակրանքի, երախտագիտութեան եւ զնահատանքի ջերմ արտայայտութիւններէն որոնք կու գային ամէն տարիքի հին թէ նոր հարազատներէ, բարեկամներէ եւ ծանօթներէ, խօսք առաւ ըսելով՝ «Գիտէք, թէ այս պահուն դժուար է ինձի համար

հմտութիւններ ձեռք բերելու: Տասներկու երկիրներէ ժամանած երիտասարդ Արհեստավարժներու առաջնորդներ, Հինգշաբթի օր ծրագրային քննարկումներ ունեցան Միութեան Կեդրոնական Գրասենեակին մէջ, որուն յաջորդեց աշխույժ գրոյց մը Նախագահ Սէմ Սիմոնեանի հետ:

Երեկոյեան, 300-է աւելի երիտասարդ Արհեստավարժներ, աշխարհի տարբեր կողմերէն, հիւրընկալուեցան Նիւ Եորք եւ շրջակայքի երիտասարդ Արհեստավարժներու խմբակցութեան կողմէ քաղաքամէջի լաւագոյն գիշերային զբօսավայրերէն մէկուն մէջ, ուր անոնք ընկերային խանդավառ մթնոլորտի մը մէջ մեկնարկեցին Ընդհանուր Ժողովի գործունէութիւնները:

Յաջորդ օր, աշխատանքային հանդիպումներու շարք մը տեղի ունեցաւ Մէնսթըրին Պանդոկին մէջ: Պատուիրակներ քննարկեցին Հ.Բ.Ը.Մ.Ի միաւորող ուժին շնորհիւ իրականացած գործունէութիւնները եւ անոնց բարեբար ազդեցութիւնը հայ ժողովուրդին եւ հայրենիքին վրայ, անցնող քանի մը տարիներուն: Ապա ներկաները առիթը ունեցան վայելելու մտերմիկ գրոյց մը Նախագահ Պերճ

Քննարկման կը մասնակցէին՝ Տնօրէն Վահագն Գործադիր Տնօրէն Ամերիկայի Օպըրովըր Բիւրօնը Ֆրանսիայէն, Անաթոլ Լիւրվին, Տնօրէն Եւրասիա Մրագրի, Պատասխանատու Պետականաշինութեան Գուլինաի Հիմնարկի, Կարօ Փայլան, Այցելու Գիտաշխատող, Միջազգային Խաղաղութեան Գարնէկի Հիմնարկի եւ Մայքըլ Բուպին, Ամերիքըն Էնթրփրայզ հիմնարկի աւագ գիտնական:

Յաջորդ երկու քննարկումները որոնք կը համադրէր APRI հիմնարկի հիմնադիր-տնօրէն Լարա Սեդրակեան, կեդրոնացան «Հայաստանի Անվտանգութիւնը Տարածաշրջանային Ապահովութեան Ծիրէն Ներս» նիւթին: Մասնակցողներն էին՝ նախկին Հրամանատար Բապըրթ Համիլթըն, Եուրէջ-Թա Բիսըրջ-Ի Ֆորէյն Փոլիսի Բիւրօնը Ինսթիտուի ղեկավար, Ներսէս Գօփարեան, Նէվատայի (Լաս Վէկաս) համալսարանի քաղաքական գիտութիւններու դասախօս, Լէօնիտ Ներսիսեան, APRI հիմնարկի աւագ գիտաշխատող եւ Մարկարիթա Թադէուսեան, ծորճ Մէյսըն Համալսարանի ծիմի եւ Բազըլին Քարթըր խաղաղարարական գործընթացի Կեդրոնի Գործադիր Տնօրէն:

Վերջին երկուսուրեքն խորագիրն էր՝ «Հայաստանի Պահպանողական Արտագնայ Գործունէութիւնը Արտաքին Քաղաքականութեան եւ Կրօնական Ազատութեան վերաբերեալ»: Կը մասնակցէր Դեսպան Սէմ Պրատուպէք, Ամերիկայի Քանգաս Նահանգի Նախկին Մերակուտական եւ Միջազգային Կրօնական Ազատութեան Ամերիկայի Նախկին Դեսպան: Ուրբաթ 11 Հոկտեմբերի երե-

կոյեան, 380-է աւելի հիւրեր, Հին Նիւ Եորքի իւրաքանչեւ ճարտարապետութեամբ թաունհաուզ կառուցներէն Փրաթթ Հաուզ-ի մէջ, սրահէ սրահ անցնելով, ըմբոշխնեցին հայ երաժշտական արուեստի արդի կատարողութեան նմուշներ, համադամներով եւ ըմպելիքներով ջերմացած ընկերային մթնոլորտի մէջ:

Սկսելով Լուսի Եղիազարեանի ձէգ Հնգեակի կատարողութենէն, ներկաները յաջորդական սրահներու մէջ յայտնաբերեցին կատարողական տարբեր ոճերու դրսեւորումներ: Ինչպէս՝ Ինդեսա Տուօ երկակը՝ Լուսինէ Մուսայէլեան եւ Նէյթըն ձիօրճէթթի Վիօյա տա Կամպայ, Մհեր Մնացականեան, Անդրանիկ Քիզիրեան եւ Ալպէր Օրտինեան երեակը Լոս Անճէլըսէն, Տուսուկ, շվի, քլարինէթ, ուտ, տհօլ եւ տափ ազգային ժողովրդական գործիքներով, թաւ ջութակահար եւ յօրինող Արթիօմ Մանուկեան էլէքթրօնիք թաւ ջութակով եւ Կրէկըրի Տօյպաշեան պարային կատարողութեամբ:

Երեկոյի բոլոր մասնակիցները, իրենց հիացումը յայտնեցին այս արտակարգ յղացումով ծրագրին մասին, որ վայելքի աննախընթաց պահեր շնորհած էր իրենց:

Ընդհանուր առմամբ, շաբաթավերջը, ուրախ տրամադրութիւններով, գոհունակութեան զգացումներով եւ հպարտալից իրագործումներու զնահատումով հագեցած միասնութեան ոգիի աշխույժ դրսեւորում մըն էր, որ բնորոշ է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ կը շարունակէ գայն յառաջ մղելու աւելի քան 120 տարիներէ ի վեր:



արտայայտել ինքզինքս: Խորապէս զգացուած եմ իմ եւ վերային նկատմամբ շուայլուած զնահատանքի ջերմ արտայայտութիւններէն: Արդարեւ, մեր անցած կեանքի ամբողջ ընթացքին, մենք առաւելազօն վարձատրուած ենք, որովհետեւ այն զգացումը թէ կրցած ենք օգտակար հանդիսանալ ուրիշներուն, լաւագոյն վարձատրութիւնն է որ կարելի է ակնկալել: Ես անձամբ չեմ հաւատար ծառայութեան մէջ գոհողութեան գաղափարին: Երբ կը հաւատաս նպատակին որուն կը ծառայես, ուրիշներուն օգտակար ըլլալու առիթն է որ գերագոյն գոհունակութիւն կը պատճառէ: Այս Միութիւնը հիմնուած է այդ իտէպլին վրայ: Այս Միութեան մէջ մենք սորված ենք թէ պէտք է տալ, ուրիշին օգտակար ըլլալու գոհունակութենէն զատ ոչինչ ակնկալելով: Այդ է այս կազմակերպութեան վեհութիւնը:»

Սեդրակեանին հետ, որու ընթացքին ան անկեղծօրէն արտայայտուեցաւ իր իրաւագիտական փայլուն ասպարէզին, առաջնորդական օրինակելի վաստակին եւ ընտանեկան կեանքին մասին, իր կեանքի հարուստ փորձառութենէն բխող խորհուրդներ փոխանցելով ներկաներուն, որոնց մէջ տիրական էր երիտասարդական աշխույժ մեծամասնութիւն մը:

Այս առթիւ կազմակերպուած APRI Armenia-ի Նիւ Եորքի խորհրդաժողովը, երբ բաժիններով, կեդրոնացած էր Հայաստանի անվտանգութեան նոր հաւասարակշռութիւնը նիւթին վրայ՝ «Ռուսիա, Արեւմուտք եւ Հարաւային Կովկասի հեռանկարները» ենթախորագրով:

Առաջին բաժինը անհատական հարցազրոյց մըն էր Դեսպան ծոն Հըրպսթի հետ, որ Աւագ Տնօրէնն է Ատլանտեան Խորհուրդի Եւրասիոյ Կեդրոնին: Հարցազրոյցը կը վերաբերէր «Միացեալ Նահանգներու Նախագահական Ընտրութիւնները եւ Հարաւային Կովկասի Կապակցութեամբ Ռազմավարական Հետաքրքրութիւններ» նիւթին: Երկրորդ քննարկումին նիւթն էր «Հայաստանի Արտաքին Քաղաքականութեան Առանցքը Բազմաբեւեռ Աշխարհի մը մէջ»:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ, ՄՇԱԿՈՅԹ, ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՒԱՔՈՅԹ
ԵՆՕՐԵԱՅ շաբաթավերջի ընթացքին, ցերեկային հանդիպումներ եւ ժողովներ առիթ ընձեռեցին մասնակիցներուն իրենց փորձառութիւնները փոխանակելու, մտերմութիւնները խորացնելու եւ մասնագէտներու հետ շփուելով նոր

PAINTING CLASS

1st Session Free

Teacher: Rita Shahinian

1060 ALLEN AVENUE PASADENA, CA 91104

REGISTER NOW

Every Friday
4:30 PM - 5:30 PM

By Calling to
+1(626) 318-0544

\$ 30 FEE / Month

Instagram.com/norserountlosangeles
facebook.com/norserountculturalassociation

Հայաստանի Պետական Կամերային Նուագախումբ եւ Մաեստրո Սիփան Օլահ - Համերգային Շրջագայութիւն Եւրոպայում



Հայաստանի պետական կամերային նուագախումբը եւ հանրապետութեան Սիփան Օլահ (Մեծ Բրիտանիա) սկսել են բացառիկ համերգային շրջագայութիւն Եւրոպայում՝ յարգանքի տուրք մատուցելով ֆրանսահայ աշխարհահռչակ շանսոնի Շառլ Ազնաւուրին, ինչպէս նաեւ հայ երաժշտարուեստի երախտաւոր Կոմիտասին, կոմպոզիտորներ Տիգրան Մանսուրեանին եւ Ռոբերտ Ամիրխանեանին: Այս բացառիկ համերգաշարի կազմակերպման գաղափարով հանդէս է եկել մաեստրո Սիփան Օլահը՝ Հայաստանի կրթութեան, մշակույթի, գիտութեան եւ սպորտի նախարարութեան աջակցութեամբ: Յատուկ շեշտադրուած էր հայկական երաժշտական ժառանգութեան ազդեցութիւնը համաշխարհային հարթակում, օտարազգի հանդիսատեսի ջերմ ընդունելութիւնը. նշում էր Շառլ Ազնաւուրի 100-ամեակը, Կոմիտասի 155-ամեակը եւ ժամանակակից կոմպոզիտորներ Մանսուրեանի ու Ամիրխանեանի 85-ամեակները:

Բացառիկ մեկնարկ Հայաստանում

Շրջագայութիւնը սկսուեց Հայաստանում. 2024 թուականի Հոկտեմբերի 5-ին Երեւանում՝ Առնօ Բաբաջանեանի համերգասրահի լեփ-լեցուն դահլիճում հանդիսատեսը ականատեսը դարձաւ հիանալի եւ շունդալից մեկնարկին: Մաեստրո Սիփան Օլահը եւ վահանակ վարդանանը ստեղծել եւ նորովի ներկայացրել են հանրապետութեան յուշերը՝ նոր մշակութային իրօրոքի յարգանքի տուրք մատուցելով մեծագոյն երաժիշտներին, որոնք անջնջելի հետք են թողել հայ եւ համաշխարհային երաժշտութեան մէջ: Սուպրանո Հայարփի Եղիկեանը (Միացեալ Թագաւորութիւն) դաշնակահար Սոնա Բարսեղեանը եւ ջութակահար Աստղիկ Վարդանեանը հիանալի ելույթներ ունեցան նուագախմբի հետ՝ արժանանալով հանդիսատեսի հիացական բացականչութիւններին եւ անդադար ծափերին: Համերգին ներկայացուցիչներ, Կոմիտասի պետական կոնսերվատորիայի պրոֆեսորներ եւ այլ բարձրաստիճան հիւրեր, որոնք ըստ արժանուր գնահատեցին երեկոյի զգացմունքային հնչեղութիւնը:

Վենետիկ, Իտալիա - Աննախաղէպ՝ պատմութեան մէջ առաջին անգամ նուագախմբային համերգ

Սբ. Ղազար Կղզու վանքում:

Հոկտեմբերի 17-ին Վենետիկի Միսիթարեան միաբանութեան Սուրբ Ղազար կղզու վանքում տեղի ունեցաւ Սիփան Օլահի ղեկավարութեամբ կամերային նուագախմբի առաջին եւրոպական համերգը: Սա առաջին նուագախմբային համերգն էր այս խորհրդանշական կղզում՝ պատմական պահ: Երազիրը բացուեց հանձարեղ Կոմիտասի ստեղծագործութիւններով, որոնց թուում՝ «Շուշիկի» եւ «Ծիրանի ծառ»՝ յատուկ զգացականութիւն հաղորդելով հանդիսութեանը: Չուսկանաւոր Աստղիկ Վարդանեանի «Կոուսկ» մենանուագը եւ Կոմիտասի «Հայրապետական մաղթանքը» տրամաբանական շարունակութիւնը դարձան արդէն իսկ ձեւաւորուած յուզական մթնոլորտի: Երեկոյն շարունակուեց աշխարհահռչակ Շանսոնի հանրապետութեան «Ազնաւուր դասականներ» հիանալի պոպուլրիով, ինչպէս նաեւ «Ave Maria», «Que c'est triste Venise» եւ «Pour toi Armenie» ստեղծագործութիւնները հնչեցին սուպրանո Հայարփի Եղիկեանի եւ թենոր Օլահի իւրօրինակ մեկնաբանութեամբ:

Համերգ Լոնտոնում՝ 24 Տարուայ Դադարից Յետոյ

Հոկտեմբերի 20-ին նուագախումբը վերադարձաւ Մեծ Բրիտանիա՝ աւելի քան երկու տասնամեակ դադարից յետոյ, կատարելով համերգ Լոնտոնի սրտում՝ Վեսթմինսթերում՝ Սմիթ Սքվեր սրահում: Համերգը կազմակերպուեց Քլինգեն Երգչախմբի եւ Մշակութային Առցիցային հետ համագործակցութեամբ՝ Մեծ Բրիտանիայում Հայաստանի դեսպանատան հովանու ներքոյ: Ներկայ էին Միացեալ Թագաւորութեան բարձրաստիճան ներկայացուցիչներ, պատգամաւորներ, լրագրողներ, պատգամաւորներ, լրագրողներ եւ Քլինգեն Երգչախմբի համերգի փոխադրարար Դորի Շմետերլինգը, ինչպէս նաեւ վեց դեսպան եւ աւելի քան 450 երաժշտասէր հանդիսատես:

Հնչեցին Շառլ Ազնաւուրի յայտնի ստեղծագործութիւնների դասական մշակումները, այդ թուում «She» եւ «Emmenez moi»-ն, որ ներկայացրեցին տենոր Սիփան Օլահը, սուպրանո Հայարփի Եղիկեանը եւ Քլինգեն Երգչախմբը: Հանդիսատեսը վայելեց նաեւ Տիգրան Մանսուրեանի եւ Ռոբերտ Ամիրխանեանի կիրոնրածաշուութիւնը, դաշնակահար Սոնա Բարսեղեանի եւ ջութակահար Աստղիկ Վար-

«Նորածնութեան Արուեստը» Ս. Պետրոս Եկեղեցւոյ Տարեկան 65րդ Նորածն Հագուստներու Ցուցադրութիւն Եւ ճաշը



Վէն Նայտի Ս. Պետրոս Հայաստանեաց Եկեղեցին գրաւիչ ոճով մը տօնախմբեց իր 65րդ տարեկան նորածն հագուստներու ցուցադրութիւն եւ ճաշկերոյթը, Նորածնութեան Արուեստը բնաբանով, Westlake Villageի Four Season շքեղ պանդոկին մէջ, Շաբաթ Նոյեմբեր 2, 2024ին: Տիկնանց Միութեան նուիրեալ ատենապետուհի Պէն Ճուլիուս իսկ ձեռնարկի ատենապետուհի Ատրինէ Ղուկասեանի գլխաւորութեամբ:

Այս ցերեկոյթին ներկայ եղան աւելի քան 500 հիւրեր, պանդոկի Կրանտ Պօլրումե գեղակերտ սրահին մէջ ստեղծելով տօնական մթնոլորտ մը:

Սրահին մուտքին 17 վաճառորդներու սեղաններու վրայի այլազան ծախու նուէրները, գոհարազարդեր, տեսականի համեմներ, Հայկական խոհանոցի ուտեստներ, նորավայել հագուստներ ստեղծեցին օրուայ արուեստի շունչը:

Ներկաները բարեկամներու հետ ընկերանալով հաճոյքով աչքէ անցուցին այս առարկաները որոնցմէ շատեր Հայկական ժառանգական ձեռագործներ էին, քաջալերելով այս նպատակալից ձեռնարկը:

Ճառագայթող պերճաշուք սրահին սեղաններուն վրայ տեղադրուած բիւրեղեայ ծաղկամաններու մէջի ծաղիկները սրահին

փայլը աւելցուցին:

Հիւրերը համեսեցին պանդոկի խոհանոցի անձնակազմի կողմէ բարձր ճաշակով պատրաստուած համեղ ճաշը:

Օրուայ կարեւոր պահը նորածն հագուստներու ցուցն էր որ քայլուղիի վրայ տողանցեցին նրբակազմ օրիորդներ ցուցաբերելով «Lourdes Chavez» եւ «Rhonda Priestly» դերձակուհիներու հագուստները, հրապուրելով բոլոր ներկաները բարձր ճաշակով պատրաստուած այս նորածն հագուստները:

30 վիճակահանութեան նուէրներ ներկաներուն մօտ ստեղծեցին առաւել եռանդ մը:

Այս ձեռնարկի բոլոր հասոյթը պիտի տրամադրուի Ս. Պետրոս Եկեղեցւոյ շինարարութեան ծախսերու հիմնադրամին որ պիտի ծառայէ ծաւալած համայնքի կարիքներուն:

Այսպէսով 65րդ տարեկան ցուցադրութեան ցերեկոյթը եւ ճաշը արձանագրեց բարձր յաջողութիւն անգամ մը եւս վկայելով Ս. Պետրոս Եկեղեցւոյ ժրջան Տիկնանց Յանձնախումբի յանձնառութիւնը հանդէպ իրենց ծուխին եւ նորարար մտապատկերը որ կը շարունակէ տարուէ տարի ի յայտ գալ ի նպատտ այս հսկայ ձեռնարկի յաջողութեան:

դանեանի մենանուագները, ինչպէս նաեւ հոբոյահար ձեք Յակոբ Մուրադեանի (Մ.Թ.) եւ սուպրանո Նարինէ Մալխասեանի (Մ.Թ.)՝ ելույթները: Երեկոյն եզրափակուեց «Ազնաւուր դասականներ» շարքով՝ նուիրուած Շառլ Ազնաւուրի ծննդեան 100-ամեակին՝ անջնջելի տպաւորութիւն թողնելով հանդիսատեսի վրայ:

Քարդիֆ, Ուելս-Առաջին Նուագախմբային Համերգ՝ Ուելս-Հայկական Համագործակցութեամբ Յաջորդ օրը, Հոկտեմբերի 21-ին նուագախումբը հանդէս եկաւ Քարդիֆում՝ Ուելսի Հայկական համայնքի կեդրոնի հետ համագործակցութեամբ: Սա նուագախմբի առաջին ելույթն էր Քարդիֆում: Համերգին ներկայ էին քաղաքապետի տեղակալ Հէլեն Լլոյդ Ջոնսը եւ Ուելսի խորհրդարանի վեց անդամներ: Ուելսում «Ազնաւուր դասականներ» շարքի պրեմիերայի շրջանակներում հնչեցին սուպրանո Հայարփի Եղիկեանի եւ տենոր Սիփան Օլահի տպաւորիչ ելույթներ:

ըր: Առանձնապատու էին «She» եւ «Pour toi, Armenianie» երգերը, յուզիչ ջութակի մենանուագը Կոմիտասի «Կոուսկ»-ում՝ Աստղիկ Վարդանեանի կողմից, տպաւորիչ մենանուագ կիրոնրածաշուութիւն, որը կատարեցին դաշնակահար Սոնա Բարսեղեանը եւ ձեք Յակոբ Մուրադեանը (Մ.Թ.)՝ Հայաստանի պետական կամերային նուագախմբի հետ: Երեկոյի շրջանակներում ներկայացուեց Կոմիտասին նուիրուած ցուցահանդէս՝ ուելսահայ նկարիչ Մարիամ Թորոսեանի կողմից:

Պրիւսել, Պելճիգա - Համերգ միջնադարեան Կամերի Աբբայութիւնում

Հոկտեմբերի 23-ին, նուագախումբը հանդէս եկաւ իր առաջին համերգով Պրիւսելում՝ միջնադարեան Կամերի Աբբայութիւնում: Համերգը կազմակերպուել էր Պելճիգայի Հայկական մշակութային կեդրոն «Հայ Տան» կողմից՝ նուիրուած Ազնաւուրի, Կոմիտասի,

Վեց Նոր Եպիսկոպոսներով Օժտուեցաւ Ղայաստանեայց Եկեղեցին



Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վերածումէն ետք, առաջին անգամ ըլլալով, Կիրակի, Նոյեմբեր 3-ին, տեղի ունեցաւ եպիսկոպոսական ձեռնադրութիւն եւ օծում ձեռամբ Ամենայն Հայց Կաթողիկոս՝ Գարեգին Բ. Հայրապետին: Արարողութեան մասնակցեցաւ նաեւ Թուրքիոյ Հայոց պատրիարք Սահակ Բ.: Եպիսկոպոսական ատրճանի արժանացան Արժանթինի եւ Զիլիի առաջնորդ՝ Առէն Վրդ. Շահինեան, Ֆրանսայի թեմի առաջնորդ՝ Գրիգոր Վրդ. Խաչատրեան, Արթիկի թեմի առաջնորդ՝ Նարեկ Վարդ. Աւագեան, Սիւնեաց թեմի առաջնորդ՝ Մակար Վրդ. Յակոբեան, Գեղարքունեայց թեմի առաջնորդ Պարգեւ Վարդ. Բարսեղեան եւ Յունաստանի թեմի առաջնորդ Խորէն Վրդ. Առաքելեան:

Ս. Պատարագի սկիզբը Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր տաճարի Ս. Ստեփանոս նախասարկաւագի խորանին վրայ կատարեց ընծայացուցներու հաւատքի ուղղափառութեան քննութիւնը եւ եկեղեցւոյ իւրաքանչիւր աստիճանի ներկայացուցիչներէն ստացաւ արժանատիութեան խորհրդանշական վկայութիւնները: Ապա վեհափառ Հայրապետը աւագ խորանին վրայ մատուց Ս. Պատարագ իր մօտ էին Թուրքիոյ Հայոց Սահակ Բ. պատրիարքը եւ Մայր Աթոռի արտաքին յարաբերութեանց ու արարողակարգի բաժնի տնօրէն Գերշ. Տ. Նաթան Արք. Յովհաննիսեանը: Իսկ

խարտաւիական էր ԱՄՆ-ի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Պարսամեան:

Շարականի երգեչողութենէն ետք՝ վեհափառ Հայրապետը սրբալոյս միւլունով օծեց ընծայեալներու ճակատներն ու աջ բուխ մատները: Աւարտին՝ նորած եպիսկոպոսներուն յանձնուեցան եպիսկոպոսական գաւազան ու մատանի:

Իր քարոզին մէջ վեհափառ Հայրապետը խօսեցաւ եպիսկոպոսութեան կարգի կարեւորութեան ու առաքելութեան մասին: Ան՝ հայրաբար յորդորեց նորած եպիսկոպոսները, որ անոնք բոլորանուէր ծառայեն մեր ժողովուրդին, առաջնորդելով ապրելու աստուածային պատուիրաններու համաձայն եւ հաւատարիմ մեր հայրերու ավանդութեանց, որպէսզի հոգեւոր արժէքներու պայծառութեամբ ամուր մնայ մեր ժողովուրդի հաւատքը:

Քարոզէն ետք, «Ողջոյն»ի պահուն եկեղեցականները բարձրացան խորան եւ Ամենայն Հայոց Հայրապետի գլխաւորութեամբ, շնորհաւորեցին նորած սրբազանները համբուրելով անոնց աջը:

Յաւարտ Ս. Պատարագի հաւատացեալ ժողովուրդը եւս առիթն ունեցաւ շնորհաւորելու նորած եպիսկոպոսները, որոնք յառաջիկայ շաբաթ՝ ամէն որ Մայր Տաճարին մէջ ուխտի Ս. Պատարագ պիտի մատուցանեն:

«Մարմարա»

Երգչուհի Իլտա Սիմոնեանի Համերգը Զօնուած Կոմիտասին

Համակրելի երգչուհի Իլտա Սիմոնեան, անցնող շաբաթավերջին, փառաշուք համերգով մը հանդէս եկաւ Իսթանպուլի մէջ: Իլտա Սիմոնեան ներկայիս կ'ապրի Հոլանտայի մէջ: Ան՝ մեծն Կոմիտասի ձօնուած ծրագիրը մը ներկայացուց Պոլսոյ Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, մեկնաբանելով Կոմիտասի 12 ստեղծագործութիւնները:

Երգչուհիին նուագակցեցան տուտուկահար Վարդան Յովհաննիսեան եւ Ամսթերտամէն լարային քառեակ մը:

Երեկոյթը պատուեցին Իսթանպուլի մօտ Հոլանտայի աւագ հիւպատոս Արժէն Ուիթթերլինտէ եւ պատրիարքական փոխանորդ Տ. Սարգիս Աւ. Քհնյ. Գուլումճեան, ընկերակցութեամբ Տ. Յարութիւն Վրդ. Տամատեանի:

Նշենք նաեւ որ Իլտա Սիմոնեան Թուրքիայէն մեկնած է Հոլանտա: Երաժշտութեան ուսուցչուհի



մըն է, նաեւ՝ որպէս մեներգչուհի, միշտ կը զբաղի Կոմիտասի ժառանգութեամբ: «Ժամանակ»

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան

Շարունակուած էջ 8-էն

կայացնելու Աւետարանչականի գնահատանքի նուէրը: Վեր. Մանճըրքեան շնորհակալութիւն յայտնեց այս առանձնաշատուկ պատուին համար: «Յունիս 22, 2023-ին ես աշխարհի ամենաերջանիկ մարդն էի» ըսաւ ան, «Երբ ձեռնադրուեցայ ծառայելու Ռոտ Ալլէնտի Հայ Աւետարանական Եկեղեցիին որպէս հովիւ: Սակայն այդ երջանկութիւնը կարճ տեւեց՝ հինգ ամիս: Ես մեծ կաթուած ստացայ: Սակայն ես երբեք չբողոքեցի իմ հիւանդութեան համար: Ընդհակառակը, ես երախտապարտ եմ Աստուծոյ, որ փկեց զիս որպէս պատասխան իմ մօրս եւ տիկնոջս աղօթքներուն՝ վերադառնալու գործունեայ կեանքիս եւ ծառայելու Աստուծոյս:»

Յայտագրի երկրորդ կէտը յատուցանելու ԱՀԱԼ-ի Գործադիր Տնօրէն՝ Հանգուեցալ Ջաւէնի խանութեանին: «Այն տարւոյ տարիներու ընթացքին, երբ ես եւ Ջաւէնը միասին ծառայեցինք Ընկերակցութեան, մենք մասնակցեցանք բազմաթիւ իրադարձութիւններու եւ ուրախ առիթներու, ինչպէս ԱՀԱԼ-ի 100-ամեակի տօնակատարութիւններուն,» ըսաւ Ընկերակցութեան Նախագահ՝ Տօքթ. Նազարէթ Տարագճեան: «Բայց մենք ականատես եղանք նաեւ այնպիսի մեծ ողբեր-

գութիւններու, ինչպիսին են Արցախեան պատերազմը եւ անոր յաջորդող Արցախի բնակիչներու բռնի տեղահանութիւնը: Ջաւէնը անյապաղ զօրաշարժի ենթարկեց Ընկերակցութեան բոլոր միջոցները, հասնելու հազարաւոր անօթեւան Արցախցիներուն՝ ապահովելով անոնց սնունդ եւ կացարան, մինչեւ անոնք կարողանան գտնել աւելի մշտական բնակարաններ: Ջաւէնի կարեկցանքն ու հայրենասիրութիւնը անսահման էր:»

ԱՀԱԼ-ի Գործադիր Տնօրէն Ջաւէն խանութեանի (2014-2024) մասին յատուկ տեսաներկայացում է մը ետք Տօքթ. Տարագճեան բեմ հրաւիրեց անոր տիկնոջ՝ Սօնա խանութեան, եւ անոր շնորհեց յատուկ գնահատանքի նուէր մը: Տիկին խանութեանի խօսքերը յուզիչ էին, երբ ան նշեց թէ որքան երախտապարտ է որ հնարաւորութիւնը ունեցած է իր կեանքը կիսելու Ջաւէնի հետ, ինչպէս նաեւ Աւետարանչականին եւ անոր Նախագահ Տօքթ. Տարագճեանին ու անոր տիկնոջ Տօքթ. Անի Տարագճեանին իրենց ցուցաբերած քաջալերութեան եւ բարոյական աջակցութեան եամար:

Յիշարժան երեկոն եզրափակուեցաւ Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի Գործադիր Տնօրէն՝ Վեր. Դոկտ. Վահան Յ. Թութիկեանի Օրհնութեան Աղօթքով:

Հայաստանի Պետական Կամերային

Շարունակուած էջ 17-էն

Ամիրխանեանի եւ Մանսուրեանի ծննդեան յօբելեաններին: Կոմիտասի մասին կարճ վաւերագրական ֆիլմից յետոյ երեկոն շարունակուեց «Ազնաւուր դասականներ» շարքով, ինչպէս նաեւ Ազնաւուրի «Une vie d'amour» եւ «La Boheme» յայտնի ստեղծագործութիւններով՝ սուպրանօ Հայրապետի Եղիկեանի եւ թենոր Սիփան Օլազի կատարմամբ:

Զուխակահար Աստղիկ Վարդանեանը կատարեց Մանսուրեանի կինոերաժշտութիւնը, եւ դաշնակահար Սոնա Բարսեղեանը՝ Ամիրխանեանի «Գարնանային կաթիլներ» ստեղծագործութիւնը: Նուագախմբի «Երագի իմ երկիր հայրենի» ստեղծագործութեան եզրափակիչ համատեղ ելոյթը մենակատարներին հետ անկրկնելի հետք թողեց աւելի քան 300 հանդիսականների վրայ:

Քիոլն, Գերմանիա՝ - Գալա Համերգ

Շրջագայութեան յաջորդ կանգաւոր Հոկտեմբերի 24-ին Քիոլնում էր. երեկոն կազմակերպուել էր Գերմանիայում Հայ առաքելական թեմի կողմից Սուրբ Ազնես եկեղեցւոյ: Ծրագիրը բացուեց Կոմիտասի անմահ գործերով, որտեղ սուպրանօ Տաթևիկ Աշուրեանը (Գերմանիա) եւ Չուխակահար Աստղիկ Վարդանեանը հանդէս եկան յուզիչ ելոյթներով: Սուպրանօ Անուշ Նազարեանը (Գերմանիա) կատարեց Ռոբերտ Ամիրխանեանի «Արեւոտ անձրեւ» ռոմանսը: Այս յատուկ երեկոն ներառում էր նաեւ «Ազնաւուր դասականներ» շարքը, որն առաջին անգամ հնչեց Քիոլնում, ինչպէս նաեւ Շառլ Ազնաւուրի յայտնի երգերը, որոնք ներկայացուցին թենոր Սիփան Օլազի եւ սուպրանօ Հայրապետի Եղիկեանի կողմից: Դաշնակահար Սոնա Բար-

սեղեանի վիրտուոզ կատարումը Ռոբերտ Ամիրխանեանի «Տղամարդիկ» ֆիլմի կինոերաժշտութիւնից, ինչպէս նաեւ Քիոլնի Կոմիտաս երգչախմբի տպաւորիչ ելոյթը «Երագի իմ երկիր հայրենի» երգով, դեռ երկար կը մնան հանդիսատեսի յիշողութեան մէջ: Համերգն աւարտուեց «Pour toi Armenie» երգով, որը կատարեցին երեք սուպրանօ՝ Հայրապետի Եղիկեանը, Տաթևիկ Աշուրեանը եւ Անուշ Նազարեանը, Քիոլնի Կոմիտաս երգչախումբը, Հայաստանի պետական կամերային նուագախումբը՝ մասետրօ Սիփան Օլազի ղեկավարութեամբ: Հանդիսատեսի երկարատեւ ոտնկայս ծափահարութիւնները հաս-

տատեցին երեկոյի յաջողութիւնը: Այս համերգային շրջագայութիւնը միաւորել է հայկական երաժշտութիւնը, այն կրող եւ կատարող երաժիշտներին, համայնքային խորհուրդներին, դեսպանատներին, հայոց եկեղեցւոն եւ երոպացի հանդիսատեսին: Վենետիկից մինչեւ Լոնտոն, Քարդիֆ, Պրիւսել եւ Քիոլն՝ մասետրօ Սիփան Օլազը եւ Հայաստանի պետական կամերային նուագախումբը ըստ արժանուցն ներկայացրել են հայկական երաժշտարուեստի ոգին ու ժառանգութիւնը համաշխարհային բեմերում՝ լայն սպեկտրով՝ հաստատելով այդ գործի յոյժ կարեւորութիւնը:

45 Ամեակ Դայ Նազուկեցի Եկեղեցիի

Շարունակուած էջ 7-էն

դը ուղղուեցաւ Եկեղեցւոյ շրջափակ եւ հոն վեր. Մկրտիչեան անդրադարձաւ 1915 ի Յեղասպանութեան, Տէր զօրի կիզիչ անապատներէն Աստուծոյ հրաշագործութեամբ վերապրողներուն, ինչի պատգամին եւ թէ ինչպէս Քրիստոսակեղերոն հաւատքով եւ հայրենասիրութեամբ լեցուած մեր հայրերն ու մայրերը հասան Կլէնտէլ եւ հիմնեցին առաջին Հայ Աւետարանական Եկեղեցին Կլէնտէլի մէջ, շէշտը դնելով խաչին պատգամին վրայ եւ ամէն ջանք թափեցին որպէս զի նոր սերունդը չը մոռնայ անցեալը եւ չը մոռնայ մեր պապերու հողերը ու չը մոռնայ 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը:

«Շարունակելով մեր պապերու հաւատքի ժառանգը եւ նկատի առնելով խաչի խիստ էական կարեւորութիւնը, Եկեղեցւոյ ժողովուրդի ու բարեկամներու նուիրատուութիւններով, այսօր կը կատարենք հայոց ցեղասպանութեան նուիրուած խաչքար յուշարձանի բացում նուիրումը՝ Կլէնտէլի Հայ Նազուկեցի Եկեղեցիի շրջափակէն ներս, ի յարգանք 1915-ի ցեղասպանութեան նահատակներուն եւ

անոնց յիշատակը յաւերժացողներուն»:

Ապա Եկեղեցւոյ Հովիւրը կատարեց ինչքանի որ նուիրման յատուկ աղօթքը:

«Հայր Մեր «ի երգեցողութենէն, Օրհնութեան աղօթքէն եւ Կիլիկիա մաղթերքի երգեցողութենէն ետք, ժողովուրդը համախմբուեցաւ Եկեղեցւոյ Ալաճաճի սրահէն ներս եւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ հաղորդակցական պահ:

Ահաւասիկ Յեղասպանութեան նուիրուած ինչքանի որ նուիրումը եւս աւելցաւ աշխարհի տարածքին գտնուող միւս յուշարձաններուն կողքին եւ բոլորս կանչուած՝ հաւատարիմ մնալ մեր նահատակներու սրբազան կտակին՝ յիշելով, յիշեցնելով եւ պահանջելով Աստուծային արդարութիւնը:

Յիշենք թէ Յեղասպանութեան նուիրումը ինչքանի որ պատրաստուեցաւ Հայաստանի Կիւմրի քաղաքին մէջ եւ գործն է ութսունամեայ վարպետ՝ Ռաֆայել Սարիբեկյանի եւ օգնութեամբ իր զաւակին՝ Սարպեկ Սարիբեկյանի, իսկ Յուշարձանը՝ ձարտարապետ Յովէլ Պապիկեանի:

Հայ Նազուկեցի Եկեղեցի, Կլէնտէլ

«Դիլիջան» Սենեկային Երաժշտութեան

Շարունակուած էջ 8-էն

ուեստ երաժշտութեան համերգներ, նաեւ շնորհակալութեան խօսք ուղղեց բոլոր բարերարներին:

Այս տքնաջան աշխատանքը պարգեւատրելու էր եկել Գլենդէլի քաղաքային խորհրդի ներկայացուցիչ Արդի Քասախեանը համապատասխան պատուոգրերով. վաչէ Պարսումեանին շնորհում էր արուեստի մէջ առաջնորդութեան վկայագիր, իսկ Մովսէս Պողոսեանը ստանում էր վկայագիր՝ մշակութային հաստատութիւններին զգայացուց ծառայութիւններ մատուցելու համար: Հայկական մանրանկարչութեան օրինակներով զարդանախշուած վկայագրերը ստորագրել էր Գլենդէլի քաղաքապետ Էլեն Ասատրեանը:

Ողջոյնի խօսք ունէր գեղարուեստական ղեկավարի իր պաշտօնը աւարտած Չուլթակահար Մովսէս Պողոսեանը: Նա յիշում էր Պարսումեանի հետ համագործակցած 20 աշխատանքային տարիները, որոնց ընթացքում ներկայացրել էին 89 համերգներ եւ իր շնորհակալութիւնն էր յայտնում

վերագտել էին այն միջոցը, որ կարող էր պարգեւել «Դիլիջան»ի համերգն իր իւրաքանչեւութեամբ:

Յաջորդ էլոյթը Առնօ Բաբաջանեանի Դաշնամուրային եռանուագի (Piano Trio in F-sharp Minor) կատարումն էր: Դաւիթ Լիսկեր (Չուլթակ), Եւգենի Տոնխա (Թաւջութակ) եւ Լենա Լիսիցեան (դաշնամուր) եռեակի մասնագիտական բարձր վարպետութիւնը զնահատելով հանդերձ, այնուամենայնիւ, հայ դաշնակահարուհին իր ազդեցիկ եւ տպաւորիչ, յուժկու եւ խրոխտ նուագով նշանակալի դեր էր կատարում՝ ապահովելով Բաբաջանեանի յօրինման ազգային շունչը:

Երկրորդ բաժնում ներկայացուեց Լարք երաժշտանոցի երկարամեայ ուսուցիչ, կոմպոզիտոր Արտաշէս Քարթաւեանի Լարային քառեակը (String Quartet 2011): Հայկականութեամբ տոգորուած, ժամանակակից երաժշտական մտածողութեամբ ստեղծուած այս գործը հեղինակի ներկայութեամբ լսելն աւելի տպաւորիչ էր դարձնում ունկնդրութիւնը: Այն կատարում էին Թերե-



Լարքի ընտանիքին:

Ապա խօսք էր առնում «Դիլիջան»ի նոր գեղարուեստական ղեկավարը՝ Թավջութակահար, միջազգային մրցոյթների դափնեկիր Եւգենի Տոնխան: Երկար տարիներ ի վեր նա կապուած է Լարք երաժշտանոցին, ուր աշակերտութեան համար հանդէս է եկել զանազան համերգ-դասախօսութիւններով, այստեղ են սովորում իր դասերը: Հմուտ թավջութակահարի համար շատ զնահատելի է վաչէի հաւատքը իր նկատմամբ, ինչպէս նաեւ Լարքի ազդու միջավայրը:

Վերջապէս սկսում էր համերգը: Այն նուիրուած էր արուեստագէտ, նկարիչ Էմիլ Գազարին, որպէս երախտիքի արտայայտութիւն Լարքի անձնակազմի անդամներին պատկերող 4 կտաւների համար, որ համաշխարհային ճանաչում ունեցող արուեստագէտը սիրով նուիրել էր երաժշտանոցին: Այս նուիրատուութիւնների շարքում էր գտնուում նաեւ «Փառաբանութիւն Սուրբ Սեսիլիային» կտաւը: Համերգը բացուում էր Բենջամին Բրիտտէնի «Փառաբանութիւն Սուրբ Սեսիլիային» (Hymn to St. Cecilia) երգչախմբային գործով, որ ներկայացրեց Լարքի «Գեղարդ» երգչախումբը վաչէ Պարսումեանի ղեկավարութեամբ. վերադարձել էինք մեր հին օրերին, գողտրիկ սրահի ունկնդիրները իրաւամբ

զա Ստանիսլաւը, Դաւիթ Լիսկերը (Չուլթակներ), Ռոբերտ Բրոֆին (ալտ) եւ Եւգենի Տոնխան (Թաւջութակ): Նրանց կատարմամբ՝ Ալեքսանդր Բորոգինի Լարային քառեակով (String Quartet #2) եզրափակուեց համերգը:

Համերգին յաջորդում էր հիւրասիրութիւնը, որ կայացաւ Լարքի թեատրալային կից «Թրպանճեան» սրահում: Այստեղ ունկնդիրները կարող էին հանդիպել արուեստագէտներին, զրուցել եւ միմեանց փոխանցել համերգից ստացած տպաւորութիւնները:

Այսպէս. համաճարակային դադարից յետոյ, վաչէ Պարսումեանի նոր կորովով գործի լծուելուց յետոյ, սեփական համերգասրահն ապահովելուց յետոյ, նոյն վայրում գրադարան եւ մշակութային արժէքների պահոց ստեղծելուց յետոյ, «Դիլիջան» համերգաշարը վերսկսուեց յետոյ, Հայաստանում կոմիտասի Երկերի ժողովածուի 2-րդ լրամշակուած հրատարակութեան նիւթական աջակցութիւնը ստանձնելուց յետոյ, Լարք երաժշտական ընկերակցութիւնը շարունակում է իր ճանապարհը՝ երաժշտական աշխարհի եւ հայ մշակութային արժէքների պահպանման ու խտրաբարեկամութիւնը:

Իսկ ամենք՝ վայելելով ստեղծուածը, դառնում էինք այս պատմական իրադարձութիւնների վկաներ:

Սրտի Խօսք՝ Անճ Սիմոնեանի

Շարունակուած էջ 13-էն

coming year, I plan to visit all of our AGBU chapters and the local constituents they serve, accompanied by Sylva© Her unwavering support for my challenging endeavors is not only comforting but also essential© Together, we aim to build stronger connections with our leadership and communities." (Յաջորդ տարի կը ծրագրեմ Սիլվային ընկերակցութեամբ այցելել Հ.Բ.Լ.Մ.ի մեր բոլոր մասնաճիւղերը եւ տեղական այն շրջանակները որոնց կը ծառայեն անոնք: Սիլվային անխախտ աջակցութիւնը իմ դժուար աշխատանքներուս, ոչ միայն օգտակար է ինձի համար, այլեւ անհրաժեշտ: Միասնաբար, մեր նպատակն է գորաւոր կապեր եւ յարաբերութիւններ մշակել մեր ղեկավարութեան եւ համայնքներուն հետ:)

Վերջացնելէ առաջ իմ խօսքս,

կ'ուզեմ մէջբերել Նախագահ ձոն Քէնէտի ըսած յայտնի խօսքը իր Ամերիկայի նախագահ ընտրուելուն առիթով, 30 Յունուար 1961-ին: Ասիկա կ'ուղղեմ մեր երիտասարդներէն իւրաքանչիւրին. "Ask not what your country can do for you; ask what you can do for your country©" (Մի հարցնէք թէ ձեր երկիրը ինչ կրնայ ընել ձեզի համար, այլ հարցուցէք թէ դուք ինչ կրնաք ընել ձեր երկրին համար):

Մեր սրտագին բաղձանքն է, որ մեր բարձրացող սերունդը ջանայ տալ իր կարելին, որպէսզի ապրի եւ գոյատեւէ Սփիւռքի Հայը, հայրենի ժողովուրդն ու հայրենիքը:

Ընտանեօք սրտանց կը շնորհաւորենք Սէմ եւ Սիլվա Սիմոնեանները, այն հաստատ համոզումով, որ անոնք իրենց առաւելագոյնը պիտի ընծայեն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, ազգին ու հայրենիքին:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$75,00 * \$150,00 (first class) for USA
 \$ 250,00 (Air Mail) for Canada.
 \$ 400,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel:-----
 Email: -----

Մ20 ԵՆ Մ23 ԵԱ. Հայաստանի Խուճըրը Նուաճեց 13 Ոսկէ, 5 Արծաթէ ԵՆ 4 Պրոնզէ Սետալ



Հայաստանի պատանի եւ երիտասարդ ծանրորդները Լեհաստանի Ռաշին քաղաքի մէջ կատարուած Եւրոպայի Մ20 եւ Մ23 տարեկաններու առաջնութեան աննախագէտ արդիւնք ցոյց տուին՝ երկամարտի ընթացքին նուաճելով 13 ոսկէ, 5 արծաթէ եւ 4 պրոնզէ մետալներ, կը հաղորդէ ԿԳՄՍՆ-ի կայքը:

Ծանրամարտի Հայաստանի պատանեկան հաւաքականի կազմէն Մ20 տարեկաններու առաջնութեան յաղթեցին Ալեքսանդր Գրիգորեանը (55 քկ), Աննա Ամրոյեանը (76 քկ), Էմմա Պողոսեանը (81 քկ), Ժուլիէթա Աւանեսեանը (+87 քկ): Տղաներու պայքարին ժորա Գրիգորեանը (55 քկ), Նարեկ Մկրտչեանը (81 քկ) եւ Ալեքսանդր Լազարեանը (102 քկ) դարձած են ոսկէ մետալակիրներ, Ռաֆիկ Մինասեանը (61 քկ) եւ Աշոտ Մովսիսեանը (+109 քկ) նուաճած են արծաթէ, իսկ Մարտին Պողոսեանը (73 քկ) եւ Վալերիկ Մովսիսեանը (89 քկ)՝ պրոնզէ մետալներ:

Մինչեւ 23 տարեկաններու պայքարին ոսկէ մետալներ նուաճած են Լիանա Գիրշեանը (87 քկ), տղոց պայքարին՝ Գառնիկ Զօլակեանը (61 քկ), Գոռ Սահակեանը (73 քկ), Սուրէն Գրիգորեանը (89 քկ), Գարիկ Կարապետեանը (109 քկ) եւ Պետրոս Պետրոսեանը (+109 քկ): Արծաթէ մետալակիրներ դարձած են Միլենա Խաչատրեանը (81 քկ), Մարգարիտա Առաքելեանը (87 քկ) եւ Մերի Թումասեանը (+87 քկ), իսկ Կարէն Մարգարեանը (81 քկ) եւ Մնացական Աբրահամեանը (89 քկ) նուաճած են պրոնզէ մետալներ:

«Մանչըսթըր Սիթին» Պարտութիւն Կրեց, «Լիվերպուլը» Հասաւ Յաղթանակի



Անգլիոյ Փրեմիեր Լիգայի առաջնութեան 10-րդ հանգրուանին ախոյեան «Մանչըսթըր Սիթին» հիւրընկալեց «Պորնմուտին» եւ պարտութիւն կրեց 1:2 արդիւնքով:

«Լիվերպուլը» իր դաշտին վրայ 2:1 արդիւնքով առաւելութեան հասաւ «Պրայթընի» նկատմամբ:

«Լիվերպուլը» 25 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը նահանջած «Մանչըսթըր Սիթիէն»:

«Նիւքասլ Եունայթըդը» Յաղթեց «Արսենալին»

Անգլիոյ Փրեմիեր Լիգայի առաջնութեան 10-րդ հանգրուանին փոխախոյեան «Արսենալը» հիւրընկալեց «Նիւքասլ Եունայթըտին» եւ պարտուեցաւ 0:1 արդիւնքով:

Միակ կողմ 12-րդ վայրկեանին նշանակեց շուէտացի յարձակող Ալեքսանդր Իսակը:

«Արսենալը» 18 կէտով երրորդն է, «Նիւքասլ Եունայթըտը» 8-րդ տեղը կը գրաւէ՝ 15 կէտ:

«Պարսելլոնան» Պարտութեան Մատնեց «Եսպանիոլին»

Սպանիոյ առաջնութեան 12-րդ հանգրուանին փոխախոյեան «Պարսելլոնան» ընդունեց «Էսպանիոլին» եւ առաւելութեան հասաւ 3:1 արդիւնքով:

«Ինթերը» Յաղթեց Մարթինեսի Կոլի Շնորհիւ



Իտալիոյ առաջնութեան 11-րդ հանգրուանին ախոյեան «Ինթերը» հիւրընկալեց «Վենեցիային»: Իտալացի Սիմոնէ Ինձագիի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ նուազագոյն արդիւնքով:

65-րդ վայրկեանին յաղթական կոլի հեղինակ դարձաւ աշխարհի ախոյեան եւ Ամերիկայի գաւաթակիր Արժանթինի հաւաքականի յարձակող Լաուտարոյ Մաթինեսը:

Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ինթերի» հիմնական կազմին մէջ էր եւ մասնակցեցաւ ամբողջ խաղին:

«Ինթերը» 24 կէտով երկրորդն է եւ առաջատար «Նափոլիէն» ետ է 1 կէտ: «Վենեցիան» 18-րդն է՝ 8 կէտ:


Արման Ծառուկեանն Ու Իսլամ Մախաչեւը Կը Մենամարտին Լոս Անճելոսի Մէջ

Խառը մենամարտերի (MMA) թեթեւ ծանրութեան կարգին (70 քկ) UFC դասակարգման առաջին համար, Հայաստանը ներկայացնող ռուս Արման Ծառուկեանը UFC ռուս ախոյեան Իսլամ Մախաչեւի հետ ախոյեանական մենամարտ կը կատարուի Յունուարի 18-ին Լոս Անճելոսի մէջ:

Արման Ծառուկեանի խումբէն յայտնած են, որ նախապատրաստական փուլը արդէն սկսած է:

MMA-ի մէջ 28-ամեայ Արման Ծառուկեանը կատարած է 25 մենամարտ, արձանագրած է 22 յաղթանակ:

33-ամեայ Իսլամ Մախաչեւը 27 մենամարտէն 26-ը յաղթած է: 2019թ. Ապրիլին Մախաչեւը մրցավարներու որոշմամբ հասած էր յաղթանակի Ծառուկեանի դէմ մենամարտի ընթացքին:



«Մասթերս». Կարէն Խաչանովը Պարտուեցաւ Կիսաեզրափակիչին

Աշխարհի 21-րդ ռակէտ, ռուս Կարէն Խաչանովը չկարողացաւ դուրս գալ Փարիզի «Մասթերսի» եզրափակիչ: Հայ թենիսիստը մրցեցաւ աշխարհի 18-րդ ռակէտ, ֆրանսացի Ուզոյ Ումպերի հետ, որ առաւելութեան հասաւ 6:7 (6:8), 6:4, 6:3 արդիւնքով: Մրցախաղը տեւեց 2 ժամ եւ 46 վայրկեան:

Փարիզի «Մասթերսի» մրցանակային հիմնադրամը 5,9 միլիոն եւրօ է:

«Ինթեր Մայամին» Պարտուեցաւ 1/8 Եզրափակիչի Երկրորդ Խաղին. «Կալաքսին» Յաղթական

ՄԼՍ-ի 1/8 եզրափակիչի երկրորդ խաղին «Ինթեր Մայամին» հիւրընկալեց «Աթլանթա Եունայթըտին» եւ պարտութիւն կրեց 1:2 արդիւնքով:

Առաջին խաղին նոյն արդիւնքով յաղթած էր «Ինթեր Մայամին»:

Նոյնմբերի 10-ին կը կատարուի երրորդ հանդիպումը:

Լոս Անճելոս «Կալաքսին» առաջին խաղին 5:0 արդիւնքով յաղթելէ ետք՝ Բոլորատօ «Ռափիտին», երկրորդ խաղը եւս աւարտեց յաղթանակով 1:4 արդիւնքով:

Լոս Անճելոսի երկրորդ խումբը՝ «LAFC»-ին երկրորդ խաղին 3:0 արդիւնքով պարտուելով վանքովը խումբէն, ստիպուած է մասնակցելու երրորդ խաղին:

«Պարսելլոնային» տուպլի հեղինակ դարձաւ սպանացի կիսապաշտպան Տանի Օլմոն: Աչքի ինկաւ նաեւ պրագլիցի յարձակող Ռաֆինեան:

«Պարսելլոնան» 33 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 9 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Ռէալէն», որ մէկ հանդիպում նուազ կատարած է: «Էսպանիոլը» 17-րդն է՝ 10 կէտ: